



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

18779

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ

ՅԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ ԴԱՃԻՆՔ ԿՆՔԱԾ,
ԽՍՀՄ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄ Ե ՊԱՏՐԱՍՏՈՒՄ



327. 2
F-95

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴԻ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿԶ.
ՄՈՍԿՎԱ. 1931

327.2
P-95

11 MAR 2013

Ի. ԲՈՒԿԱՏՈՎ

27 SEP 2006

15 JAN 2010

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ

ՅԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ ՊԱՅԻՆԵ ԱՄԲԱԾ,

ԽԱՀՄ ԴԵՄ ՊԱՏԻՊՈՍՈՒ Ե ՊԱՏԻՊՈՅՈՒՄ

1207
33909



857

ԽՍՀՄ ԺՈՒԺՈՎՈՐԴԻ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿԶ.
ՄՈՍԿՎԱ.

1931

18779

Թարգմ. Գ. Գ.



Главлит № А-89.165 Заказ № 538 Тираж 5.000
Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

I. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՈՐՑԱԿԻՆ

Վերջին տարվա տեղի ունեցած դեպքերը այլևս վոչ մի կասկածի տեղիք չեն տալիս, վոր կապիտալիստական աշխարհը կրկին գտնվում է համաշխարհային պատերազմի նախորդակին: Իմպերիալիստական պետությունների գլխավոր շտաբները անհրաժեշտ աշխատանքը, ցամաքային և ծովային սպառազինումների կատարելի աճումը, կապիտալիստական բանակների վերադասավորումը և վերակառուցումը, այս բոլորը ապացուցում են, վոր նոր պատերազմը գտնվում է իր պատրաստման ամենայնոուն շրջանում: Այս պատերազմը, վորը միանգամայն անխուսափելի է կապիտալիստական աշխարհի ծանր տնտեսական ճգնաժամի հետևանքով, պատրաստվում է բոլորովին այլ պայմաններում, քան բոլոր մինչև այժմ տեղի ունեցած իմպերիալիստական պատերազմները: Այս հատուկ պայմաններում յերկրագնդի մի 6-րդ մասը — ԽՍՀՄ, կապիտալիզմից անկախ և հակառակ նրան, վերակառուցում է իր կյանքը սոցիալիստական

հիմունքների վրա: Դժվար և այժմ գտնել վորևե
բուրժուական գործիչ, վորը հերքի այս շինա-
րարութեան հաջողութեանները: Սկսած մինիստր-
ներից մինչև ժուրնալիստները և գեներալները —
իմպերիալիստները ստիպված են խոստովանել,
վոր խորհրդային յերկիր սոցիալիստական վերա-
կառուցումը կենսագործվում և մեծ հաջողութեամբ:
Խորհրդային Միութեան սոցիալիստական շինա-
րարութեան հաջողութեանները իմպերիալիստների
շրջանում մահու վախ են առաջ բերում իրենց՝
արդեն կործանվող՝ փտած կապիտալիստական
սխտեմի համար: Ահա թե ինչու իմպերիալիստ-
ները ուժգին պատերազմի յեն պատրաստվում և
առաջին հերթին պատերազմի՝ ԽՍՀՄ դեմ: Իմ-
պերիալիզմը իր առաջ յերկու նպատակ է դնում:
1) նոր ինտերվենցիայի (ներխուժման) ոգնու-
թեամբ լուծել ի հաշիվ ԽՍՀՄ-յան, կապիտալիզ-
մի — համաշխարհային տնտեսական ճգնաժամից
առաջ յեկած հակասութեանները և 2) վոչնչա-
ցնել ԽՍՀՄ վորպես սոցիալիստական յերկիր,
վորը հանդիսանում է միջազգային պրոլետա-
րիատի՝ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի ռադ-
մական դրոշը, սոցիալիստական հասարակարգի
կառուցման կենդանի որինակը և ամբողջ աշխարհի
աշխատավորութեան ճանաչված հայրենիքը:

Այսպիսով, գալիք պատերազմը իմպերիալիստ-
ները տենդորեն պատրաստում են նախ և առաջ
ԽՍՀՄ դեմ, քանի վոր — լուծելով իրենց համար
խոշոր նշանակութեան ունեցող ավերածութեան
հարցը, վոչնչացնելով սոցիալիստական շինարա-
րութեան յերկիրը — իմպերիալիզմը հույս ունի
լուծել իրեն հիմնական խնդիրը — վերաբաժանել
(իրենց ապրանքները սպառելու համար) հա-
մաշխարհային շուկաները. ներկայումս գոյութեան
ունեցող դրութեանը իմպերիալիստների կարծիքով
ընդունակ է վերացնել և անգամ թեթևացնել
աճող տնտեսական ճգնաժամը:

Բոլոր յերկրների աշխատավորները պետք է
կազմակերպված լինեն հակախորհրդային պատե-
րազմի սպառնացող վտանգի առաջ և պետք է
ուժեղացնեն պայքարը պատերազմի դեմ և ԽՍՀՄ
պաշտպանութեան համար: Լենինյան կոմկուսակ-
ցութեանների ղեկավարութեամբ աշխատավոր
մասսաները պետք է ամեն որ և ամեն կերպ
ի հայտ բերեն իմպերիալիստների ինտերվեն-
ցիային պատրաստվելը: Բայց այդ աշխատանքը
խորացնելու և քաղաքականապես ու դասակար-
գայնորեն կայուն դարձնելու համար, թե ԽՍՀՄ-
յան և թե բոլոր յերկրների յուրաքանչյուր
բանվոր, յուրաքանչյուր աշխատավոր պարտա-

վոր և ուշի ուշով հետևել համաշխարհային տնտեսական ճգնաժամի զարգացմանը, կապիտալիզմի զարգացող այն հակասություններին, վորոնք առաջ են բերել ու չափազանց զարգացրել ճգնաժամը թե առանձին կապիտալիստական յերկրների կամ նրանց խմբակների գծով և թե առանձին կապիտալիստական պետությունների և նրանց զաղութների, նույնպես և կապիտալիստական աշխարհի և խորհրդային Միության միջև:

Այնպիսի խնդիրները, ինչպես — 1) կապիտալիզմի ճգնաժամի խորացումն ու սրումը, հեղափոխական շարժման ուժեղացումը իմպերիալիստական յերկրներում և գաղութներում, 2) իմպերիալիստների տենդային պատրաստությունները հակախորհրդային պատերազմի համար, 3) այդ պատրաստություններին կրոնական կազմակերպությունների մասնակից լինելը, 4) խորհրդային Միության դադմունակության ամրացման գործը, — դրանք պետք է հանդիսանան յուրաքանչյուր բանվորի, գյուղի աշխատավորի անմիջական գործը:

Հակախորհրդային պատերազմի իրական վտանգի թերազնահատումը կարելի չե վոճրագործություն համարել, հաշվի առնելով խորհրդային Միության և համաշխարհային պրոլետարական

հեղափոխության շահերը: Առաջիկա պատերազմում հաղթանակելու համար բանվոր դասակարգը պետք է ավելի լավ ուսումնասիրի հակառակորդի ուժերը, նրա հնարավորություններն ու նպատակները: Բոլոր այս խնդիրները և մասնավորապես համաշխարհային տնտեսական ճգնաժամի խնդիրը, նրա հիմնական գծերը և հետևանքները, և թե ինչպես սրանց զուգընթացաբար առաջ է տարվում հակախորհրդային պատերազմին պատրաստվելը, — այդ ամենը կաշխատենք պարզաբանել այս գրքույկում:

II. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՃԳՆԱԺԱՄԸ ՍՐՎՈՒՄ Ե

Համամիութենական կոմկուսի XVI համագումարում ընկ. Ստալինը Համ. ԿԿ (բ) ԿԿ քաղաքական հաշվետվության ժամանակ բաղմամբ փաստեր բերեց և բնութագրեց այն հակասությունները, վորոնք հանդես յեկան ու առաձնապես սուր բնույթ ստացան համաշխարհային ճգնաժամի ընթացքում: Այն հարցին, «թե ի՞նչ են ասում այս փաստերը», ընկ. Ստալինը պատասխանեց. «Ասում են այն, վոր կապիտալիզմի կայունությանը վերջ ե դրվում, այն, վոր մասսաների հեղափոխական շարժումը կաճի նոր թափով և

այն, վոր համաշխարհային տնտեսական ճգնա-
 ժամը փոխվելու յե մի շարք յերկրներում քաղա-
 քական ճգնաժամի: Այդ նշանակում ե, վոր բուր-
 ժուազիան դրությունից յեւք գտնելու համար
 դիմելու յե ներքին քաղաքականության ֆաշի-
 ղացիայի, այդ նպատակին ծառայեցնելով բոլոր
 յետադիմական ուժերը, վորոնց թվում նաև սո-
 ցիալ-դեմոկրատիային: Յերկրորդ, այդ նշանակում
 ե, վոր բուրժուազիան յեւք ե փնտրելու նոր իմ-
 պերիալիստական սլատերադմի — և արտաքին քա-
 ղաքականության ասպարիզում — ինտերվենցիայի
 մեջ: Այդ նշանակում ե վերջապես, վոր պրոլե-
 տարիատը, պայքարելով կապիտալիստական շա-
 հագործման ռազմական վտանգի դեմ, յեւք ե
 փնտրելու հեղափոխության մեջ:

Ընկ. Ստալինի այս յեզրափակումները լիովին
 հաստատում են համաշխարհային ճգնաժամի
 զարգացման ընթացքով: Սկսած XVI կուսհամա-
 գումարից մինչև այժմ մենք ականատես ենք
 կապիտալիստական տնտեսության ճգնաժամի
 զարգացման ու սրման: Որըստորե խորանալով,
 այդպիսով նա ստեղծում ե ամբողջ կապիտալիս-
 տական սխտեմի ճգնաժամը: Ուրիշ խոսքով
 տնտեսական ճգնաժամը արագորեն և անընդհատ
 վեր ե ածվում քաղաքական ճգնաժամի: Այժմ

չկա աշխարհում վոչ մի յերկիր (բացառությամբ
 իՍՋՄ), վորը աղատ լինի ճգնաժամից: Այս ավելի
 քան բնորոշ ե, քանի վոր 2 — 2¹/₂ տարի առաջ
 կային մարդիկ, վորոնք ամենայն լրջությամբ
 խոսում էին վոչ միայն կապիտալիզմի ստաբի-
 լիզացիայի, այլ անգամ ծաղկման մասին: Որի-
 նակ, վոչ ուրիշը, քան Տրոցկին, խրոխտաբար
 հավաստիացնում եր, թե այնպիսի յերկիրը, ինչ-
 պիսին Ամերիկան ե, շուտով ամբողջ Յեվրոպա-
 յին պայռիկի կնստեցնի: Բոլոր ~~հեղափոխական~~
 կան յերկրների սոցիալ-դեմոկրատները միա-
 ձայն յերգում էին համաշխարհային կապիտա-
 լիզմի զարգացման բոլորովին նոր շրջանի
 մասին, վորպիսին նրանք անվանել էին «կազ-
 մակերպված կապիտալիզմի» շրջան: Այդ տեսու-
 թյունը զարգացնել էին ցանկանում աջ ուկրո-
 նիստները, տվյալ նյութի շուրջը մի շարք գրա-
 կան ստեղծագործություններով հանդես գալով:

Սակայն, կյանքը ամբողջապես փչեց «կազ-
 մակերպված կապիտալիզմի» շուրջը հյուսված
 հեքիաթը: Կյանքը լիովին հաստատեց յետպա-
 տերադմյան շրջանի կապիտալիզմի Լենինյան
 բնորոշումը, տրված Կոմինտերնի VI կոնգրեսի
 կողմից. 1927 թվից համաշխարհային տնտե-
 սությունը անցել ե իր յերրորդ շրջանը: «Կապի-

տալիստական աշխարհի համար այդ շրջանը, — աս-
ված է Կոմիտեներն ՎԼ Կոնգրեսի վորոշման մեջ, —
տեխնիկայի արագ զարգացման, տրեստների,
կարտելների հուժկու աճման, դեպի պետական կա-
պիտալիզմը հակված տեխնոկրատների շրջան եւ միև-
նույն ժամանակ համաշխարհային տնտեսութեան
հակասութեանների ուժգին զարգացման մի շրջան,
և այդ հակասութեանները ընթանում
են այն ձևով, վոր բնորոշվում է կա-
պիտալիզմի ընդհանուր ճգնաժամի
նախնական ընթացքով... Այդ յերրորդ
շրջանը, վորը առանձնապես սրել է
հակասութեանները, արտագրողական
ուժերի զարգացման և նրանց նեղված
շուկաների միջև առկա փոփոխ-
ութեանների միջև իմպերիալիստական պետու-
թեանների միջև իմպերիալիստական
պատերազմների մի շրջան, նրանց պա-
տերազմները՝ ԽՍՀՄ-յան դեմ, ազգա-
յին-ազատագրական պատերազմները
իմպերիալիզմի և իմպերիալիստական
ինտերվենցիայի դեմ, նույնպես և դա-
սակարգային հսկա մարտեր... Այս
շրջանը կապիտալիստական կայունու-
թեան հակասութեանների հետագա

զարգացման ուղիով առկա փոփո-
քեն տանում է դեպի կապիտալիզմի
կայունութեան հետագա խախտումը
և կապիտալիզմի ընդհանուր ժգնա-
ժամի ուժեղ սրումը:

VI Կոնգրեսի այդ հանձարեղ նախատեսումը
լիովին ապացուցված է կյանքից վերցրած փաս-
տերով: 1928 թվականի վերջում կապիտալիստա-
կան կայունութեանը արդեն սկսեց խախտվել:
Այդ ժամանակ արդեն ակներև ելին գյուղատն-
տեսական ճգնաժամի բնորոշ գծերը Կանադայում,
Հյուսիսային Ամերիկայում, Արգենտինայում,
Բրազիլիայում և Ավստրալիայում: 1929 թվականին
սկսվում է արդյունաբերական ճգնաժամը: Սկզբում
նա ընդգրկեց Լեհաստանը, Ռումինիան և Բալ-
կանյան յերկրները: 1929 թվականի յերկրորդ
կիսում արդյունաբերական ճգնաժամը հսկայա-
կան չափերով սկսվեց Ամերիկայում և ապա սկսեց
տարածվել Յեվրոպայի և Ասիայի այնպիսի խո-
շոր յերկրներում, ինչպիսիք են Անգլիան, Գեր-
մանիան, Չինաստանը, Հնդկաստանը և այլն:
1929 թ. վերջում և 1930 թ. սկզբին արդյունա-
բերական և գյուղատնտեսական ճգնաժամը ար-
դեն համաշխարհային բնույթ է ստանում, արա-
գորեն զարգանալով և տնտեսութեան նորանոր

ճյուղեր ընդգրկելով բոլոր կապիտալիստական յերկրներում: 1930 թ. վերջին, համաշխարհային տնտեսական ճգնաժամը, շարունակելով զարգանալ ու խորանալ, արտադրության առանձին ճյուղերը հասցրել է կատաստրոֆիկ դրություն:

Ճգնաժամի այսպիսի արագ դարգացումը, պարզ է, վոր հետք անգամ չի թողել բուրժուական սոցիալ-դեմոկրատական և աջ ոպորտունիստական մարգարեների առասպելներից, վորոնք համառոտ են կրկնում եյին կապիտալիզմի կազմակերպվածության ու ծաղկման մասին: Այդ առասպելներն անցան պատմության գիրկը, իսկ նրանց մարգարեները ստիպված են լռել: «Ծաղկման փոխարեն — մասսաների աղքատություն և գործազրկության հսկայական աճում: Դյուղատնտեսության վերելքի փոխարեն — գյուղացիության միլիոնավոր մասսաների սնանկացում» (Ստալին): Ճգնաժամի զարգացումը այս վերջին ամիսներում այնպիսի չափերի հասավ, վոր ոպորտունիստական «ստաբիլիզացիայի յենթարկված ու ծաղկող կապիտալիզմից» քարը քարի վրա չմնաց:

III. ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային տնտեսության ներկայիս ճգնաժամը տարբերվում է հին ճգնաժամերից նրանով, վոր «ծավալվում է իմպերիալիստական պատերազմի շրջանում ծագած, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բազայի վրա» (Ստալին): Նրա ամենաբնորոշ գծերն այն են, վոր նա հանդիսանում է կապիտալիստական տնտեսության համաշխարհային ճգնաժամը, միաժամանակ հանդիսանալով թե արդյունաբերական և թե գյուղատնտեսական ճգնաժամ և վոր վերջապես նա ծագել է մի յերկրում (Հ. Ամեր. Մ-ն), վորն իր ձեռքումն է պահում «բոլոր կապիտալիստական յերկրների արտադրանքի ու սպառման կեսը», վոսկու համաշխարհային քանակի կեսը: Այնուհետև, ներկայիս ճգնաժամը անցնում է մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում, յերբ արտադրության հիմնական ճյուղերը վեր են ածված խոշոր կենտրոնացված կապիտալիստական միավորումների — տրեստների, կարտելների, սինդիկատների, կոնցերնների — իսկ այդ հանգանակները շատ խոշոր նշանակություն ունի ժամանակակից ճգնաժամը հասկանալու համար: Այդ միավորումները պայքարում են ապրանքների

բարձր գների համար, չնայած այդպիսիների գերարտադրութեանը. ինչպես հայտնի չէ, գերարտադրութիւնը հանդիսանում է ճգնաժամի հիմնական և գլխավոր պատճառը: Հասկանալի չէ ուրեմն, Վոր տնտեսական ճգնաժամի ամբողջ ծանրութիւնը ընկնում է աշխատավոր մասսաների վրա, ճգնաժամը առաջին հերթին հարվածում է նրանց, քանի Վոր առաջ է բերում գործազրկութեան հսկա աճում, բանվորների աշխատավարձի անընդհատ իջեցում, բանվոր դասակարգի կենսական մակարդակի անասելի վատթարացում: Այդ հանգամանքը, ինչպես ասում եր ընկ. Ստալինը XVI կուսհամագումարում «չի կարող չյեղկարացնել ճգնաժամը, չի կարող չդանդաղեցնել նրա վերացումը»:

Ներկայիս ճգնաժամի բոլոր այս բնորոշ գծերը հրաշալի կերպով ապացուցվում են կապիտալիստական տնտեսութեան հիմնական ճյուղերի հետզհետե կրճատմամբ, գյուղատնտեսական ճգնաժամի հետզհետե խորացմամբ, ժողովրդական մասսաների աղքատութեան հսկայական աճումով և նրանց, կապիտալիստական հասարակակարգի դեմ մղվող հեղափոխական պայքարի ուժեղացումով: Այսպիսով համաշխարհային տնտեսութեան ներկա ճգնաժամը պարզ կերպով հանդես բերեց կա-

պիտալիզմի բոլոր հիմնական հակասութիւնները և աստիճանաբար փոխվում է քաղաքական ճրգնաժամի, կապիտալիստական սիստեմի ճգնաժամի, Վորպես հասարակական մի սիստեմի, Վորը պատմականորեն արդեն վերջացնում է իր կյանքը: Ներկայիս կապիտալիզմում վոչ մի, անգամ հեռավոր, անգամ չնչին կազմակերպվածութեան հետք ել չկա: Նրա հակասութիւնները ճգնաժամի հետեանքով այնքան են սրվել ու խորացել, Վոր աշխարհը կրկին կանգնած է խոշորագույն պատերազմի առաջ, սպառնալիկաները վերաբաժանելու համար, Վորի անխուսափելիութիւնը կապված է (թերևս ավելի մեծ չափերով, քան 1914 թվականի պատերազմից առաջ) կապիտալիզմի քաղաքական ճգնաժամի խորանալու ու լայնանալու հետ: Կարևորագույն փաստերից մեկը, Վորը ապացուցում է կապիտալիզմի քաղաքական ճգնաժամը, դա քաղաքական պայքարի սրվելու փաստն է թե՛ կապիտալիզմի բոլոր յերկրներում և թե՛ նրանց գաղութներում: Դրա գրավականը կարող է ծառայել Չինաստանի և Հնդկաստանի աշխատավոր մասսաների հերոսական պայքարը, Վորպիսին ահա քանի տարի չէ, իմպերիալիզմը չի կարողանում կասեցնել, չնայած բուրժուական յերկրների

իմպերիալիստական պետությունների անվերջ պատերազմը եքսպանզիաներին: Դրա դրավականը կարող է ծառայել նաև բոլոր յերկրների բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի ուժեղացումը՝ կոմկուսակցությունների լուրնգնեքով: Վորպեսզի այդ յերկու պատկերները — խորացող ճգնաժամի և դասակարգային պայքարի պատկերը մեզ համար ավելի պարզ լինի, մենք համառոտ կանգ կառնենք համալսարհային տնտեսական ճգնաժամի ընթացքի վերջին տվյալների վրա, որգտվելով մեր մամուլում պարբերաբար հրատարակվող տվյալներից:

IV. ԹՎԱՆՐ ՈՒ ՓԱՍՏՆՐ

Մենք կանգ չենք առնի այնպիսի հանրաժանոթ փաստերի վրա, ինչպես կապիտալիստական պետությունների արտաքին առևտրի շրջանառությունների խիստ կրճատումն է, նույնպես և արտադրության մի շարք ճյուղերի կրճատումն ու սահմանափակումն, — քանի վոր մի շարք կապիտալիստական յերկրներում ճգնաժամը հենց դրանից էլ սկսվել է: Համալսարհային տնտեսական ճգնաժամի ընթացքի մասին յեղած վերջին տեղեկությունները գալիս են ապա-

ցուցելու, վոր արտադրության կրճատումը համարյա բոլոր յերկրներում շարունակվում է, իսկ դրա հետ միասին չափազանց արագորեն աճում է գործադրկությունը, վորը ըստ բուրժուական սոցալտնական աղբյուրների հասնում է 18 միլիոն մարդու, իսկ փաստորեն, ինքն ըստ ինքյան պարզ է, վոր նա ավելի յե: Նորերս գերմանական կոնյուկուստուրային հետազոտումների ինստիտուտը հրատարակել է մի շարք տեղեկություններ արտադրող արդյունաբերության դրության մասին միջանի կապիտալիստական յերկրներում: Համայն այդ տեղեկությունների դեռ միայն խոշոր կապիտալիստական յերկրների արդյունաբերության արտադրանքը արդեն 1929 թ. կիսին իջել է 25 տոկոսով: Արտադրության անկումը այդ ժամանակից սկսած անընդհատ շարունակվում է: Որինակ Անգլիայում 1930 թ. սեպտեմբերին քարածուխի արտադրանքը հավասար էր 425 հազար տոննի, 564 հ. տոննի դիմաց՝ արտադրված 1929 թ. սեպտեմբերին: Բելգիայում — 246.600 և 340.200 տոնն: ՀԱՄՆ — 2.276.800 և 3.497.600 տոնն, Գերմանիայում — 642.400 և 1.092.300 տոնն, Ֆրանսիայում — 788.000 տոնն, 830.000 տոննի դիմաց: Նույն դրությունն է յերկրների մեծ մասի արտա-



դրության ասպարիզում: 1930 թ. սեպտեմբերին Բելգիայում արտադրված ե 250.200 տոնն չմշակված պողպատ, անցյալ տարվա սեպտեմբերին արտադրված 340.400 տոննի դիմաց: Ֆրանսիայում—754.700 և 751.800 տոնն, ՀԱՄՆ—2.860.000 և 4.528.000 տոնն, Գերմանիայում—801.000 և 1.214.300 տոնն և Անգլիայում—580.600 և 847.900 տոնն: Այսպիսով հիշյալ յերկրներում չուգունի արտադրությունը իջել է 32%-ով և պողպատինը—31,7%-ով: Վոչ պակաս չափերի յե հասել ճգնաժամը մանածային արդյունաբերության մեջ: Մանվածային արդյունաբերության միջազգային միությունը 1930 թ. դեկտեմբերին հետևյալ տեղեկություններն է հրատարակել—Անգլիայում կանգ է առել մանվածագործարանների մի յերրորդ մասը, իսկ ֆինացածները լրիվ չեն բեռնավորված: Յեվրոպական յերկրներից Իտալիան ամենից շատ է տուժում մանվածագործական արդյունաբերության ճգնաժամից, այնտեղ մանվածքի արտադրությունը իջել է ավելի քան 40 տոկոսով: Իտալիային հետևում են Գերմանիան և ապա Ավստրիան, վորտեղ մանվածային արդյունաբերությունը կրճատվել է 35%-ով: Չեխոսլովակիայում—30%-ով և Բելգիայում—25%-ով, Շվեյցարիայում չի աշխատում ստանոկ-

ների 10%-ը, իսկ ֆինացածների բեռնվածությունը պակսել է 10—20%-ով: Հոլանդիայում բոլորովին դադարել են աշխատել կոպիտ տեսակի մանվածք արտադրող գործարանները: Վատթար ենաև Ֆրանսիական մանածային արդյունաբերության դրությունը, որինակ Լիլլե շրջանում շաբաթ որերը ևս գործարանները չեն աշխատում: Ներկայիս որակարգում դրված է ամբողջ Ֆրանսիայի մանածագործական արդյունաբերության սահմանափակման հարցը: Միևնույն դրությունն է տիրում նաև ՀԱՄՆ-ում, վորտեղ 1930 թ. ոգոստոսին 34 միլիոն ստանոկներից չեյին աշխատում 5,1 միլիոն ստանոկ: Վերջին 8 տարվա ընթացքում յերբեք ամերիկյան մանածային արդյունաբերությունը նման կրիտիկական դրության մեջ չի յեղել: Այսպես են ընդհանուր տեղեկությունները գլխավոր կապիտալիստական յերկրների տնտեսական ճգնաժամի մասին: Սակայն պատկերը լրացնելու նպատակով անհրաժեշտ է միշարք լրացուցիչ տեղեկություններ բերել առանձին կապիտալիստական յերկրների ճգնաժամի մասին:

V. ԱՌԵՐԻԿԱ

Ակսենք Ամերիկայից, նույն Ամերիկայից, վորը ըստ Տրոցկու պիտի ամբողջ Յեվրոպան պայուկի նստեցնեն։ Ամերիկայում, ինչպես նաև բուրժուական յերկրների մեծ մասում, ճգնաժամը միաժամանակ զարգանում է թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության մեջ։ Գյուղատնտեսական ճգնաժամը չնայած մի շարք ձեռնարկումներին (ցանքսերի կրճատում, հացի ավելցուկի վոչնչացում) Ամերիկայում շարունակում է զարգանալ։ Գյուղատնտեսական մթերքների գների իջնելու հետևանքով մանր-ագարակային տնտեսությունների քայքայումը շարունակվում է։ Համաձայն, Ամերիկայի նախարար Հուվերի շնորհիվ կազմված, արդյունաբերի կոմիտեյի նախագահի հայտարարության, ՀԱՄՆ-ում արդյունաբերության ճգնաժամը շարունակում է զարգանալ։ 1930 թ. նոյեմբերին արդյունաբերության հիմնական ճյուղերի արտադրանքը և գները շարունակում են ընկնել, կրճատվել և արտաքին առևտուրը, աճել է գործազրկությունը։ Նոյեմբերին պոլսկատ ձուլող գործարանները բեռնված ելին 43⁰/₀-ով, հոկտեմբերի 53⁰/₀-ի դիմաց։ Չուգունի հալումը, համեմատած 1929 թ. նոյեմբերի հետ, կըրճատվել է 42⁰/₀-ով, ելեքտրոտեխնիկական արդյուն

նաբերության արտադրանքը — 30⁰/₀-ով, փոխադրումները յերկաթուղիներով — 16,4⁰/₀-ով։ Նոյեմբերին արտադրված է 124.000 ավտոմոբիլ, 20⁰/₀-ով պակաս, քան հոկտեմբերին և 45%-ով պակաս, քան 1929 թ. նոյեմբերին։ Կրճատվել է և կրճատվում է շինարարությունը։ Մեքենա պատրաստող գործարանները բեռնված են այժմ 63⁰/₀-ով։ Այսպիսով ճգնաժամը Ամերիկայում շարունակում է արագորեն զարգանալ։

VI. ՖՐԱՆՍԻԱ

Փրանսիան ամենից ուշ անցավ ճգնաժամերի շրջանը։ Բայց, չնայած յուրահատուկ պայմաններին (Գերմանիայի թալանումը, վորպիսի հանգամանքը Փրանսիային մի շարք տնտեսական արտոնություններ է տալիս), 1930 թ. ապրիլին-մայիսին սկսվեց Փրանսիայի տնտեսության մի շարք ճյուղերի ճգնաժամը։ 1930 թ. առաջին 7 ամիսների ընթացքում Փրանսիայի արտաքին առևտուրը իջավ 57 միլիարդ ֆրանկի, 1929 թ. նույնքան ժամանակաշրջանի 64 միլիարդի դիմաց։ Ոտարյերկրյա ապրանքների ներմուծումը (իմպորտ) այդ ժամանակաշրջանում իջավ 35-ից մինչև 30,9 միլիարդ ֆրանկ, իսկ արտածումը

(հքսպորտ) 28,9-ից 26,1 միլիարդ ֆրանկ, 1930 թ հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում Ֆրանսիայի ներմուծումն ու արտադրումը կրճատվել է 10%-ով, համեմատած անցյալ տարվա հետ 1930 թ. ապրիլ-մայիսը ֆրանսիական արդյունաբերության համար բեկման ամիսներ եյին: Հենց մայիսից սկսվում է ծանր արդյունաբերության ճգնաժամը: Որինակ չուգունի հալումը 901 հազար տոննից մայիսին, ոգոստոսին հասնում է 845 հազ. տոննի: 1930 թ. հունվարից մինչև հոկտեմբերը դադարեցին աշխատել 15 դոմենների վառարանները (հունվարին աշխատում եյին 155 վառարան, իսկ հոկտեմբերին՝ 140):

Քարածուխի արտադրման և պողպատի ձուլման կրճատման մասին մենք արդեն վերև խոսել ենք: Միայն անհրաժեշտ է ավելացնել, Վոր ֆրանսիական մետաղաարդյունաբերության գործարանների բեռնվածությունը ճգնաժամի հետևանքով անցյալ տարվա հետ համեմատած իջել է 20—25%-ով: Ճգնաժամը ընդգրկել է նաև արդյունաբերության այնպիսի ճյուղերը, ինչպես որինակ յերկաթուղայինը և շինարարականը:

Այսպիսով, արտադրության կրճատումը, առևտրի և սպառման իջեցումը, դրա հետ միասին գործազրկության աճումը և աշխատավոր մասսաների

նյութական դրություն վատթարացումը — ընդհանուր յերևույթ է դառել նաև Ֆրանսիայում, աճող տնտեսական ճգնաժամի շնորհիվ: Այս բոլորին պիտի ավելացնել Ֆրանսիայի գյուղատնտեսության խրոնիքական և որըստորե զարգացող ճգնաժամը: Այս ճգնաժամը պարզ կերպով յերևում է գյուղական ազգաբնակչության յեկամուտը պակասելու թվերից: Եթե 1912 թ. վերջինիս յեկամուտը կազմում էր ընդհանուր ազգային յեկամտի 31%-ը, ապա 1929 թ. նա կազմում է դրա միայն 27%-ը:

VII. Ա Ն Գ Լ Ի Ա

Ամերիկայից հետո ճգնաժամը անցավ Անգլիա, վորտեղ ճգնաժամի զարգացման համար ամենաբարենպաստ պայմաններ եյին ստեղծված: Պատերազմից հետո անգլիական արդյունաբերությունը չի կարողացել անցնել մինչպատերազմյան մակարդակից: Անգլիայի արտադրությունը 1929 թ. կազմում է նախապատերազմյանի 98%-ը: Անգլիական ճգնաժամի ամենաբնորոշ գծերն եյին — քարածուխի արտադրանքի, մանվածային արդյունաբերության և դրա հետ եքսպորտի կրճատումը:

Վերջերս Անգլիայում արտադրութեան կրճատումը սովորական յերևույթի յե փոխվել: Դրա հետ զուգընթացաբար նա արդյունաբերութեան նորանոր ճյուղեր ե առնում իր մեջ, որինակ դեկտեմբերի սկզբին Գլազգոյում, Ալբրոսանում ե Լաուստոֆտում փակվեցին յերեք խոշոր նավագործարան: Տնտեսական ճգնաժամի հետեանքով փակվոլ ե նաև Կլարկի խոշորագույն նավագործարանը Ֆոստում: Անգլիական արդյունաբերութեան մի շարք ճյուղերի արտադրութեան կրճատումը, իր հերթին խորացնում ու սրում ե ճգնաժամը, ավելացնելով առանց այն ել խոշոր քանակի հասած դործազրկութունը:

VIII. Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Ինչպես հայտնի յե, Գերմանիան համաշխարհային պատերազմից հաղթված դուրս յեկավ: Նա խոշոր դժվարութուններով եր վերականգնեցնում իր տնտեսութունը, քանի վոր կաշկանդված եր Վերսալի պայմանագրի շնորհիվ թելադրած ծանր տնտեսական ե ֆինանսական պարտավորութուններով: Որինակ, ըստ Յունգի պլանի, Գերմանիան պարտավոր ե հաղթութուն տարած պետութուններին մի քանի միլիարդ ուրլի վճա-

րել: Բնական ե, վոր այդ պարտավորութունները գերմանական ժողովրդական տնտեսութունից բացառիկ լարվածութուն եյին պաճանջում: Իր նախկին շուկաներից զրկված, Գերմանիան տնտեսապես անհամեմատ թույլ եր, քան հաղթանակ տարած պետութունները: Տնտեսական ճգնաժամը ընդգրկել ե գերմանական արդյունաբերութեան մի շարք ճյուղերը: Արդյունաբերութեան արտադրանքը 1930 թ. համեմատած 1929 թ. հետ, կրճատվել ե 25 %-ով, իսկ առանձին ճյուղերում նույնիսկ 50 %-ով: Գործազրկութեան հսկայական աճումը ամբողջապես տնտեսական ճգնաժամի հետեանք ե: Յեթե 1930 թ. սկզբին գործազուրկների թիվը Գերմանիայում հասնում եր 3 միլիոնի, այժմ արդեն հասել ե 4 միլիոնի:

IX. Լ Ե Հ Ա Ս Տ Ա Ն

Դեռ ամերիկական ճգնաժամի սկզբին Լեհաստանը սուր տնտեսական ճգնաժամ եր ապրում: Ճգնաժամը այժմ ընդգրկել ե արտադրութեան մի շարք ճյուղեր, սկսած չուգունից ե պողպատից, մինչե մանվածային արդյունաբերութունը: Լեհաստանի գյուղական տնտեսութունը գտնվում ե խրոնիկական ճգնաժամի մեջ: Արդյունաբերու-

թյան միակ ճյուղը, վորը անընդհատ աշխատում է, դա ռադիական արդյունաբերությունն է, Համաձայն 1930 թ. դեկտեմբերին հրատարակված՝ լեհական ժողովրդական տնտեսություն բանկի տեղեկությունների, ճգնաժամը հարված է հասցրել մանավանդ մետալուրգիային, մեքենաշինարարությունը, քիմիական, մանվածային և քարածխային արդյունաբերությունը, Համեմատած անցյալ տարվա նոյեմբերի հետ, քարածուխի արտադրանքը իջել է 16,6%-ով, սպառումը ներքին շուկայում — 10,6%-ով, արտահանումը — 22%-ով 1930 թ. հոկտեմբերի հետ համեմատած, նոյեմբերին, այսինքն 1 ամսում, քարածուխի արտահանումը իջել է 11%-ով:

Լեհաստանում գործադուլությունը անընդհատ աճում է, 1930 թ. դեկտեմբերին գործադուլիկների թիվը 150 հազարով ավելի յեր, քան 1929 թ. դեկտեմբերին:

X. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԹԵՐԿՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Տնտեսական ճգնաժամի սրումը ուժեղացնում է դասակարգային պայքարը կապիտալիստական յերկրներում: Դրան վորպես ապացույց կարող է

ծառայել գործադուլային շարժման և պրոլետարիատի ընդհարումների պայքարի անընդհատ աճումը: Անընդհատ աճող գործադուլությունը և բանվոր դասասարգի կենսական մակարդակի մշտական վատթարացումը, ել ավելի սրում են այդ պայքարը: Արդեն ասված է գործադուլիկների հսկա քանակի մասին այնպիսի յերկրում, ինչպիսին Գերմանիան է: Ըստ անգլիական աշխատանքի միխիստություն տեղեկությունների, Անգլիայում առ 1930 թվի դեկտեմբերի 1-ը հաշվվում էր 1.683.851 գործադուլիկ և 629.788 մասնակի աշխատանք ունեցող: Առ 1930 թ. դեկտեմբերի 1-ը Իտալիայում ցուցակագրված գործադուլիկների թիվը հավասար էր 545 հազ. մարդու, այսինքն 88 հազարով ավելի, քան առ 1-ը նոյեմբերի, և 202 հազարով ավելի, քան առ 1-ը դեկտեմբերի 1929 թ.:

Ինչպես տեսնում ենք, Իտալիայում գործադուլությունը, համեմատած 1929 թ. հետ, մոտ 2 անգամ աճել է: Նույն անմխիթար դրությունն է տիրում՝ ճգնաժամում տառապող մնացած կապիտալիստական յերկրներում, ներառյալ նաև Լատվիան, Լատինական Ամերիկայի յերկրները և այլն: Բանվոր դասակարգի դրությունը կապիտալիստական պետություններում որ ըստ որե վատթա-

րանում եւ Բանվորների աշխատավարձի իջեցումը, գործազուրկների սոցիալական ապահովութեան ծախսերի կրճատումը սովորական յերևույթ են դարձել: Գերմանական «Քյոլնիշ Զոկլա-Ցայտունգ» լրագրի հրատարակած տվյալների համաձայն, Գերմանիայի աշխատավորութեան 90%-ը ամսական 200 մարկից պակաս աշխատավարձ են ստանում, իսկ դրանցից 16 միլիոն մարդու աշխատավարձն անգամ 100 մարկի յե հասնում:

Լոնդոնի «Թայմս» որաթերթում Նյու-Յորքի Թիթակցի հրատարակած տեղեկութեան հիման վրա, 1929 թ. վերջից ՀԱՄՆ-ում գործազուրկների շարքերն են անցել մի քանի միլիոն բանվոր և ծառայող: Գործազուրկների մեծամասնութունը արդեն ծախսել ե ունեցած վերջին կուպոնները: «Թայմս»-ի Թիթակիցը գրում ե: «Հյուսիսային քաղաքների գործազուրկները, վրոնք լուսաբացին գալիս են, հավաքվում գործարանների դարպասների առաջ, վոտքերը սառնամանիքից փրկելու համար փաթաթում են լաթի կտորներով: Սպացուցված ե, վր Նյու-Յորքում 20 աստիճան սառնամանիքի Ժամանակ գործազուրկները քնում են առանց վառելիքի Ըստ ներկայացրած հաշիվների վճարելու հնարավորութունից զուրկ լինելու պատճառով, նրանք զրկվում

են ելեքտրական եներգիայից: Նյու-Յորքում ընտանիքներ կան, վրոնք իրենց յերեխաներին ամբողջ ուր պահում են անկողիններում, վրպես ցրտից պատսպարելու միակ միջոց: Բժիշկների հայտարարութեամբ այն պայմանները, վրոնցում ապրում են գործազուրկները, համաճարակների սպառնալիք են հանդիսանում: Ամբողջ յերկրում, հացի կրպակների առաջ կիսաքաղց մարդկանց հերթեր են կանգնած»: «1930 թ. առաջին տաս ամսվա ընթացքում—շարունակում ե Թիթակիցը—բանվորական բուների, գործադուների Թուցիկները տարածելու և այլ հեղափոխական շարժումների հետևանքով կատարած բանտարկումների Թիվը անսպասելիորեն անցավ 6.000-ից:

Կարելի յե համարել, վր այդ Թիվը անցել ե 1919 թվականի «կարմիր խուճապի» ռեկորդային Թիվից:

Միևնույն պայմաններում են գտնվում նաև մյուս յերկրներում բանվոր դասակարգի հիմնական մասսաները, չխոսելով գաղութների մասին, ուր աշխատավոր մասսաների կյանքի մակարդակը անչափ ցածր ե: Որինակ, Բոմբեյի մանածագործների ամսական միջին աշխատավարձը 2 ո. 50 կ.-ից չի անցնում. և այդ չնչին աշխատավարձի 20—23% կազմում ե բնակարանային վարձը: Բոմ-

բեյի բանվորների 75%-ը ամսական ստանում են մոտ 2 ռուբլի: Բոմբեյի մանածագործների այդպիսի պայմանների հետևանքով հափազանց աճել են յերեխաների մահացությունը: Նորեքս Հնդկաստանից վերադարձած անգլիական բժշկի հայտարարությամբ, մինչև 1 տարեկան հասակը, հազար յերեխայից — 820-ը մեռնում են:

Այդպիսով բնական է, վոր համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով հայտ բերած՝ կապիտալիզմի հիմնական հակասանքներից մեկը հանդիսանում է աշխատանքի և կապիտալի միջև պարզորեն արտահայտված հակասությունը: Հիմնական կապիտալիստական յերկրների և նրանց գաղութների բանվորների հեղափոխական պայքարը ընդդեմ իմպերիալիզմի, իրեն արտացոլում է գտել թե Ամերիկայի և թե յեվրոպական յերկրների բանվոր դասակարգի անընդհատ ընդհարումների և գործադուլների մեջ, նաև Չինաստանի, Հնդկաստանի և Հնդկաչինի և այլն աղգային աղատագրական շարժումների վերելքի մեջ:

Այդ զարգացող հեղափոխական վերելքը իր արտահայտությունն է գտնում տնտեսական ընդհարումների պայքարի սրման և աճման մեջ, այդ պայքարի քաղաքականի փոխվելու, կոմկուսակցությունների և հեղափոխական արհ-

միությունների կողմից ընդհարումների ինքնուրույն ղեկավարելու տակտիկան գործադրելու, լուրջ կապիտալիստական յերկրներում գործադուլների լայնածավալ շարժման, չին գյուղացիության հեղափոխական պայքարի և Գոմինգանի բուրժուական հակահեղափոխության դեմ Կարմիր բանակ կազմակերպելու, Հնդկաստանում, Հնդկաչինում, Ինդոնեզիայում, Աֆրիկայում իմպերիալիզմի դեմ մղվող աղգային-հեղափոխական պայքարի աճման, Յեվրոպայի, Ամերիկայի և Չինաստանի կոմկուսակցությունների ամրացման, փտած, ուղորտունիստական տարրերից մաքրելու մեջ» (XVI կուսհամագումարի վորոշումներից):

Մի. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ, ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ՅԵՎ ՅԵԿԵՂԵՑՈՒ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ, ԽՍՀՄ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱԿԱՆ ՅԵ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Այսպիսով, համաշխարհային տնտեսական ճգնաժամը, ի հայտ բերելով ժամանակակից կապիտալիզմի հիմնական հակասությունները, արագորեն քաղաքական ճգնաժամի յե վերածվում: Այս հանգամանքը յերևան է գալիս հիմնական իմպերիալիստական պետությունների, կախման մեջ գտնվող յերկրների և գաղութների փոխհարաբերություն-

ների պրոցեսում: Մի՞թե հեղափոխական պայքարը Ձինաստանում կապիտալիզմի քաղաքական ճգնաժամի արտահայտիչը չէ: Այդ պայքարը հանդիսանում է հիշյալ ճգնաժամի ամենացայտուն արտահայտությունը, վորովհետև գեներալների միջև յեղած անվերջ պատերազմների, անասելի շահագործման և իմպերիալիստների պատժիչ եքսպլոզիցիաների շնորհիվ անսահման աղքատություն ու իրավազրկություն հասցրած Ձինաստանի բանվորներն ու գյուղացիներն արդեն անցել են մասսայական զինված պայքարի՝ խորհրդային լոկոնգների տակ: Ձինաստանի հսկայական տեղիտորիայի տասնյակ ու հարյուրավոր շրջաններ մի շարք տարիներ է, ինչ կարմիր բանակների և Ձինաստանի վորքի յեղած աշխատավորությունն ու գոմինդանյան վոյենշչինայի միջև տեղի ունեցող կատաղի դասակարգային մարտի վայրերի յեն փոխվել: Ներկայումս Կանտոնի 1937 թ. կոմունայի կարմիր դրոշը ծածանվում է Ձին հանրապետության տասնյակ ու հազարավոր կիլոմետրերի վրա:

Այս լինչ է նշանակում: Կրկնում ենք, այս նշանակում է, վոր կապիտալիզմը անցել է ընդհանուր ճգնաժամի, քաքաքական ճգնաժամի մի շրջան, յերբ աշխատավորական մասսաների հե-

ղափոխական պայքարի որակարգում դրված է կապիտալիստական հասարակարգը խորհրդայինի վերածելու խնդիրը:

Բայց Ձինաստանը բացառություն չի կազմում: Հեղափոխական պայքարի ակիքները տարածվել են նաև այնպիսի յերկրներում, ինչպես են Հընդկաստանն ու Հնդկաչինը, վորոնք անգլիական ու Ֆրանսիական իմպերիալիզմի հում նյութի բազաներ են հանդիսանում: Մի՞թե Բոմբեյի մանածագործների յեղությունը, վորը գազանաբար ճնշվեց տեղական սոցիալ-ռեֆորմիստների և անգլիական կառավարության պատժիչ ձեռնարկումների շնորհիվ, տեղի չէր ունենում իմպերիալիզմի դիմ անխնա դասակարգային պայքարի լոկոնգների ներքո: Մի՞թե 1930 թ. տեղի ունեցած մի շարք ապստամբությունները (որինակ Փեշվարի գալառում), վորոնց ճնշելու համար անգլիական զորքեր եյին ուղարկված, Հնդկաստանում տեղի ունեցող ազգային - ազատագրական պայքարի զարգացած ձևերը չեն (անկասկած առայժմ անզարգացած ու անկազմակերպ): Հնդկական աշխատավոր մասսաների հեղափոխական պայքարը թե անցյալում և թե ներկայումս մղվում է թե բրիտանական իմպերիալիզմի և թե «սեփական» բուրժուազիայի դեմ: Թե այս և թե մի

Հարք այլ փաստեր հանդիսանում են կապիտալիզմի հակասությունների քաղաքական արտահայտութիւնը, վորոնք սրվել են համաշխարհային տնտեսական ճգնաժամի շնորհիւ: Հեղափոխական դեպքերը Սպանիայում, Գերմանիայի, Ֆրանսիայի և այլ յերկրների պրոլետարիատի բուռն ցույցերն ու հերոսական գործադուլները, վորոնք տեղի յեն ունենում մեր յեղբայրական կոմկուսակցութիւնների ղեկավարութեամբ ու լողունգներով, ապացուցում են, վոր կապիտալիստական հասարակակարգի դեմ մղվող ամբողջ աշխարհի պրոլետարական մասսաների դասակարգային պայքարը գորեղանում և լենինյան մարտական դրոշի տակ:

Իմպերիալիստները շատ լավ գիտակցում են, վոր իրենց հասարակական սիստեմի ճգնաժամի հետագա սրումը կապված և աշխատանքի և կապիտալի հակասութիւնների ևլ ավելի ուժեղ սրվելու հետ: Յեւ այդ բոլոր հակասութիւնները նրանք ցանկանում են լուծել նոր պատերազմի և առաջին հերթին, խորհրդային Միութեան դեմ ուղղած պատերազմի ոգնութեամբ: Այդ նպատակով նրանք մոբիլիզացիայի յեն յինթարկում իրենց փորձված կադրերը— իրենց կողմը գրավելով բանվոր դասակարգի գործի փորձված դա-

վաճան սոցիալ-դեմոկրատներին և կապիտալիզմի կայուն դաշնակից կրոնը:

Պատերազմի ուժեղ պատրաստութիւնները իմպերիալիստները կատարում են զանազան լողունգների և մասնավորապես բուրժուական «խաղաղասիրների» և սոցիալ-ֆաշիստների պացիֆիստական ճոռմաբանութիւնների ներքո: Սակայն բանվորական մասսաները այլևս չեն հավատում սոցիալ-իմպերիալիստների դավաճան խոսքերին, վորոնք խոսքով իբր թե պայքարում են սոցիալիզմի համար, իսկ իրականում իմպերիալիստական քաղաքականութիւն են վարում: Բոլոր յերկրների բանվորները յուրացնում են հեղափոխական մարքսիզմի-լենինիզմի տակտիկան՝ դասակարգային անխնա պայքարի տակտիկան, հաղթանակաբեր պրոլետարական հեղափոխութիւններին պատրաստվելու և ապագա իմպերիալիստական սպանդանոցը, — յեթե վերջինս ծագելու լինի, — քաղաքացիական պատերազմի վերածելու տակտիկան: Զուր չի, վոր առանձին սոցիալ-դեմոկրատներ, վորոնք չեն դավաճանել հեղափոխական մարքսիզմի սկզբունքներին, հեռանում են սոցիալ-դեմոկրատիայի շարքերից և անցնում լենինյան կոմկուսակցութիւնների մարտական շարքերը: Շատ բնորոշ և այդ տեսակի-

տից Բեռլինի ակտիվ սոցիալ-դեմոկրատ Գրոսսի նորերս արած դիմումը (լույս ե տեսել «Ռոտե Փանե»-յում 20 դեկտեմբ. 1930 թ., ՏՍՍՍ): Այդ դիմումի վերնագիրն ե՝ «Պրոլետարական միացյալ ֆրոնտ ստեղծեք Ֆաշիզմի ե գալիք սովի դեմ». Գրոսսը հայտարարում ե. «Բանվորներ! իմ բոլոր մտքերը, իմ ամբողջ աշխատանքը սոցիալիզմի համար, ձեզ ե պատկանում, ընկերներ՝ սոցիալ-դեմոկրատ կուսակցությունից, հւր ե հասցրել ձեզ սոցիալիզմի համար մղվող «խաղաղ» պայքարը: Այն ուղին, վորով մեզ տանում ե սոցիալ-դեմոկրատիան, հանդիսատ պարտություններ ե մեզ բերում: Մենք դեպի կործանումն ու Ֆաշիզմն ենք ընթանում: Բանվորներ! կա արդյոք Գերմանիայում վորևե սոցիալիստական բան, հանրապետության տասնեերկու տարվա գոյությունից հետո: Հերիք են դավաճանություններն ու խաբեբայությունները: Թող կորչի ներկա «ոսվիրաների» բանդան: Սոցիալ-դեմոկրատների այդ «ոսվիրաների» գլուխների վրայով պարզենք մեր ձեռքը կոմունիստներին: Կեցցե միացյալ ֆրոնտը! Կեցցե իսկական սոցիալիզմը: Միացեք Կարլ Լիբկնեխտի ե Ռոզա Լյուքսեմբուրգի ղրոշի տակ»:

Նման հայտարարություններ վերջին տարի-
ների ընթացքում շատ հաճախ են տեղի ունե-
նում: Նրանք ապացուցում են յերկու ակնհայտ
փոփոխություն, այն է՝ 1) վոր դասակարգների զարգա-
ցող պայքարում ժամանակակից սոցիալ-դեմո-
կրատիան, անցնելով բուրժուազիայի կողմը,
քանի գնում, այնքան ավելի յի վորոշակի դառ-
նում հեղափոխական շարժման դահիճը, 2) այն
բոլորը, ինչ վոր ազնիվ ու լավն են նրա շարքե-
րում, կտրականապես խղում են իր կապերը
«տրադիցիաների» հետ և անցնում կոմկուսակ-
սակցությունների, դասակարգային պայքարի
դրոհի կալոննանների և պրոլետարական հեղափո-
խության իրական դեկավանների շարքերը, Հե-
ղափոխական շարժումը իմպերիալիստական յեր-
կրներում ընթանում են Մարքսի և Լենինի ցույց
տված ճանապարհով, հակառակ բանվոր դասա-
կարգի գործին դավաճանած և ԽՍՀՄ դեմ ին-
տերվենցիա կազմակերպող բուրժուազիայի հետ
դաշինք կապած սոցիալ-դեմոկրատիայի կամքի:
Բազմաթիվ փաստեր, սոցիալ-դեմոկրատիայի
վերջին յերկու տարվա գործնելությունից, կա-
պիտալիզմի հակասությունների ուժեղ սրման և
նոր պատերազմ պատրաստելու շրջանում, գալիս
են ապացուցելու, վոր սոցիալ-դեմոկրատիան

անցել ե բուրժուազիայի շարքերը: Մասնակից լինելով բուրժուական կառավարություններին և նրանց ղեկավարությամբ (Ֆրանսիա, Դերմանիա, Անգլիա), սոցիալ-դեմոկրատիան փաստորեն դավաճանում ե բանվոր դասակարգի գործին և բացարձակորեն վեր ե ածվում բուրժուական կուսակցությունների ֆաշիստական թևի:

Դրան վորպես ապացույց, մի ավելորդ ապացույց, կարող ե մատուցել 14 հայտնի մենշևիկների դատավարությունը: Վոր տեղի ունեցավ Մոսկվայում ս. թ. մարտի սկզբին: Մենշևիկները մեր յերկրում գաղտնի հյուսել են իրենց բույնը և, ցուցմունքներ ու դրամական ոժանդակություն ստանալով II Ինտերնացիոնալից, իրենց շուրջը հավաքելով ամեն տեսակ հակահեղափոխական տարբերի և նրանց հետ բլոկ կնքած՝ տարիներ շարունակ զբաղված են յեղել ֆրասարարական գործով՝ մեր ժող. անտեսության բոլոր ճյուղերում. ինչ եր դրանց նպատակը.—կործանել Խորհրդային իշխանությունը, կործանել մեր սոցիալիստական անտեսությունը և մեր յերկիրը դարձնել համաշխարհային իմպերիալիստների ավագակների գաղութ: (Ծ. Խ.)

Իմպերիալիզմը, խելակորույս, իր դրությունը փրկելու համար, անհրդերն նոր արյունոտ պա-

տերազմի յե պատրաստվում, բայց նա այստեղ մի նոր խոչընդոտի յե հանդիպում, — կապիտալիզմի և ԽՍՀՄ միջև յեղած հակասության, վորպիսին հանդիսանում ե ժամանակակից կապիտալիզմի ամենահիմնական պակասություններից մեկը:

Այդ հակասությունը ամենակարևոր հակասությունն ե, հիմնական պրոբլեմներից մեկը, վորպիսին լուծելու համար գլուխ ե կտրում ժամանակակից կապիտալիզմը: Նա յելք ե փնտրում այդ հակասությունից յելնելու համար. «Ամեն այդ համ, յերբ կապիտալիստական հաւանգամ, յերբ կապիտալիստական հասությունները սկսում են սրվել կուրժուազիան իր հայացքը դարձնում ե ԽՍՀՄ կողմը: Նի՞ կարելի արդոք կապիտալիզմի այս կամ այն հակասությունը, կամ բոլոր հակասությունները լուծել ԽՍՀՄ — Խորհուրդներին Յերկրի, հեղափոխության ամբողջ հաշվին, — վորը միայն իր գոյությամբ հեղափոխականացնում ե բանվոր դասակարգը ու գաղութները, խանգարում ե աշխարհը նորեն վերաբաժանելը խանգարում ե տիրանալ իր ներքին ընկալաբարում ե տիրանալ իր ներքին ընկալաբարում ե զուգակալին, վորն այնքան անդարձալի շուրջում:

հրաժեշտ եկապիտալիստներին, մասնավանդ այժմ տնտեսական ձգնաժամի հետևանքով» (Ստալին): Իմպերիալիզմը ճգնաժամ է դուրս գալ ձգնաժամից և միաժամանակ, խՍՀՄ դեմ ուղղած պատերազմի միջոցով իրեն պաշտպանել՝ խՍՀՄ-յան հեղափոխականացնող ազդեցությունից: Ներկայումս, հակահեղափոխական «Պրոմպարտիայի» պրոցեսի հետ միասին յերևան են յեկել և ապացուցված են իմպերիալիստների հակախորհրդային պատերազմի պլանները: Վնասարարների ցուցմունքները հանկարծակիի բերին իմպերիալիստներին և նրանց գլխավոր շտաբներին, խՍՀՄ դեմ ինտերվենցիա կազմակերպելու ամենայնոհուն շրջանում: «Պրոմպարտիայի» ֆնասարարները մանրամասնորեն պատմեցին Ֆրանսիայի, Լեհաստանի և այլ յերկրների իմպերիալիստների դավերի մասին: Արդեն մի շարք տարիներ, ֆրանսիական գլխավոր շտաբի ղեկավարությունը հակախորհրդային պատերազմի մասնավորապես ծրագրերն էյին կազմվում, վորին պիտի ակտիվ կերպով մասնակցեյին Լեհաստանը, Ռումինիան, Չեխո-Սլովակիան և այլ յերկրներ: Պարզվեց, վոր այդ ծրագիրը մշակելուն մասնակցել են Արևմտյան Յեվրոպայի ականավոր պետական գործիչները, և վոր հակախորհրդային պա-

տերազմը կազմակերպելու և ներշնչողների ցուցակում են գտնվում այնպիսի մարդիկ, ինչպես Պուտինկարեն, Բրիանը, զենեքալ ժանենը և այլն: Սկզբում ինտերվենցիան նշանակված էր 1930 թ., ապա փոխադրված 1931 թ.: Ինտերվենցիայի գլխավոր նպատակն էր տապալել խորհրդային իշխանությունը և խՍՀՄ տերրիտորիայի վրա վերականգնեցնել բուրժուական-կալվածատիրական տիրապետությունը, զենեքալների դիկտատուրայի գլխավորությունը: Դավաճանները «Պրոմպարտիայից», գործելով իրենց արտասահմանյան տերերի, «Տորգպրոմի» ցուցմունքներով, ուսական արդյունաբերություն այդ նախկին թագավորների (Ռյաբուշինսկիների, Նոբելների, Դենիսովների և այլն), խոստանում էյին ինտերվենտներին առատ վարձատրություն՝ խորհրդային իշխանությունը տապալելու համար: Նրանք խոստանում էյին Կովկասի նավթը, Ուկրաինայի քարածուխն ու ցորենը, խոշորագույն կոնցեսիաներ խՍՀՄ մի շարք շրջաններում և այլն: Ուրիշ խոսքով ֆնասարարները խորհրդային յերկրը ավերելու գծով ոժանդակում էյին գործնականում իմպերիալիստներին, լուծել ժամանակակից կապիտալիզմի հիմնական — խորհրդային Միություն և կապիտալիզմի միջև յեղած հակա-

սությունը: Սակայն ԽՍՀՄ աշխատավոր մաս-
սաները, «Պրոմպարտիայի» պրոցեսից ել առաջ
գլխեյին, վոր իմպերիալիզմը առանց դադարի
Խորհրդային Միության դեմ պատերազմ ե պատ-
րաստում: Այդ նրանք գլխեյին բազմաթիվ ուրի-
նակներից, բազմաթիվ հակախորհրդային կամ-
պանիաներից, վորոնց մասին միշտ գրվում եր
կապիտալիստական և սոցիալ-ֆաշիստական մա-
մուլի եջերում: ԽՍՀՄ և աշխարհի աշխատավոր-
ները շատ լավ հիշում են, թե ինչպես իմպերիա-
լիստները ցանկանում եյին Խորհրդային Միու-
թյան և Չինաստանի միջև պատերազմ ծագեցնել,
վորպեսզի այդ պատերազմը հետագայում վերա-
ծեն ամբողջ աշխարհի իմպերիալիստների և սո-
ցիալիստական շինարարության յերկրի պատե-
րազմի: Յուրաքանչյուր բանվոր և գյուղացի հի-
շում ե մի շարք այլ պրովոկացիաներ, վորոնց
նպատակն ե յեղել արհեստական կոնֆլիկտներ
ստեղծել ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրների
միջև: Խորհրդային Միության աշխատավորու-
թյունը չի մոռանա «կուտյուպովչինան» և պապի
«խաչակրաց արշավանքը»: Մինչև այժմ կապի-
տալիստական աշխարհի ուշադրության կենտրոնն
ե հանդիսանում բացառիկ անամոթ մի կամպա-
նիա՝ դա այսպես կոչված «գեմպինգային կամ-

պանիան» ե: Դժվար չե հասկանալ, վոր այդ բոլոր
իմպերիալիստական կամպանիաների նպատակն
ե հասարակական կարծիք ստեղծել՝ ԽՍՀՄ դեմ
պատերազմի դուրս գալու համար: Իմպերիալիզմը
շատ լավ հաշվի յե առնում, վոր նման պատե-
րազմի համար հատուկ մոտիվներ են հարկավոր:
Իմպերիալիզմը շատ լավ պիտե, վոր կապիտա-
լիստական յերկրների բանվորներն ու գյուղա-
ցիները դեռ հիշում են առաջին ինտերվենցիան,
ուղղված, այն ժամանակ դեռ յերիտասարդ Խոր-
հրդային Յերկրի դեմ: Հիշում են հակախորհրդա-
հրդային Յերկրի դեմ: Հիշում են հակախորհրդա-
յին նոր պատերազմի կազմակերպիչ պարոնները
յան այնպիսի դեպքեր, ինչպես որինակ Ֆրան-
սակ այնատեղիների ապստամբությունը Սև
սիական նավատիների ապստամբությունը Խոր-
հրդային Սև ծովում, վորոնք ուղարկված եյին Խորհրդային
Սև ծովի լիմանները լիմաններում: Այդ մա-
յերկրները լիմաններում ե պատերազմի յեղի
սին շատ լավ հիշում են առաջին ինտերվենցիայի
կազմակերպիչ Պուանկարեններն ու ժանենները,
կատարվել է այն ապստամբության մասին, վորը կատարվել է
այն ապստամբության մասին, վորը կատարվել է
պրովետարիատի դիկտատուրայի յերիտասարդ յեր-
կրը ինտերվենցիայից փրկելու համար: Վերջա-
պես իմպերիալիստները գիտեն, վոր «ինտերվեն-
ցիան յերկրայր մի փայտ ե» (Ստալին): Ահա թե
ինչու նրանք զանազան կամպանիաներ են հա-
րում, «իրենց» յերկրների հասարակական կար-

ժեքը իՍՆՍՊ ղեմ ուղղելու նպատակով, վերապեսգլի ինտերվենցիան բարոյապես արդարացնեն և գաղափարապես հիմնավորեն: Հեռավոր արևելյան ավանդուրան անհաջող անցավ — սկսվում է կուտոյուզինան: Կուտոյուզինան Պուլիս չի գալիս — սկսվում է խորհրդային դեմպինգի առասպելը: Իմպերիալիստները նախ և առաջ կոմերսանտներ են: Նրանք նախապես հաշվի չեն առել ինտերվենցիայի ծախսերը և նրանից սպասվող ոգուտները: Որինակ, Ռյաբուշինսկին ինտերվենտներին, այդ «առևտրական» ձեռնարկին մասնակցելու համար, 500 տոկոսանոց շահ եր խոստացել:

XII. ՀԱԿԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Իմպերիալիզմը, ինտերվենցիան բարոյապես նախապատրաստելու հետ միասին, իր ուժերը դործնականորեն կարգի յե բերում՝ ԽՍՀՄ դեմ դուրս գալու համար, Նա նախապես դերաբաժանում է կատարում զանազան յերկրների միջև, հակախորհրդային պատերազմի համար, Նա սկզբից նախատեսնում է, թե վո՞ր պետությունը, վո՞ր բանակը, ինչ տեղ են գրավելու ապագա

խնտերով են ցիւղալու։ Գլխավոր հրամանատարը
դերը, ինչպես այժմ պարզվել է, ստանձնել է
իմպերիալիստական Ֆրանսիան։ Չե վոր ԽՍՀՄ
դեմ ուղղած ռազմական միությունների կազմա-
մակերպիչը նա յե հանդիսանում։ «Պրոմպար-
տիայի» միաստարներին նա յե հրահանգներ
տալիս, ԽՍՀՄ-ում դիվերսիոն ակտեր ու լրտե-
սություն կատարելու համար։ Նա յե, վերջապես,
զինում իր ռազմական զաշնակիցներին՝ Խորհրդ-
դային Միության դեմ պայքարելու համար։ Վոր
այդ իրոք այդպես է, մենք հնարավորություն
ենք ունեցել համոզվել բազմաթիվ, ամբողջ աշ-
խարհին հայտնի փաստերով, վոր այդ իրոք այդ-
պես է, աշխատավոր մասսաները իմանում են
Ֆրանսիայի և Լեհաստանի միջև կնքած ռազմա-
կան պայմանագրի տեկստից, Վորի բովանդակու-
թյունը տվել է ընկեր Վիլի Մյունցենբերգը
«ԽՍՀՄ դեմ ռազմական պատրաստու-
թյունների ետապները» հոդվածում («Կոմ-
սոմոլսկայա Պրավդայի» 28/VI—30 թ. №-ում)։
Ընկ. Մյունցենբերգին իր հոդվածում գրում է՝
«Ֆրանսիայի և Լեհաստանի միջև յեղած պայմա-
նագրում ցույց է տրված — «Լեհաստանի և Խոր-
հրդային Ռուսաստանի միջև ծագած պայքարի
դեպքում, Ֆրանսիան պարտավոր է 1) Լեհաստ-

տանի բանակին ռազմամթերք հայթայթել, 2) նստափոխումի միջոցով ապահովել Լեհաստան զենք փոխադրելը, 3) հրահանգիչներ ուղարկել լեհական բանակ, 4) կարիքի դեպքում, Ֆրանսիական ռմանդակ զորք ուղարկել Լեհաստան: Լեհ-խորհրդային կոնֆլիկտը, Գերմանիայի խռոնվելու հետևանքով, բարդանալու դեպքում Ֆրանսիան պարտավոր է վերջինին պատերազմ հայտարարել, մոբիլիզացիայի յենթարկելով իր բանակը, անցնել Գերմանիա: «Յիթի Գերմանիան է հարձակվում Ֆրանսիայի վրա, Լեհաստանը մոբիլիզացիայի յենթարկում իր բանակը և Ֆրանսիական զեռագույն հրամանատարության ցուցմունքներով, յենում է Գերմանիայի դեմ»:

Այս հասարակ թղթի կտոր չեւ Այս ճշտորեն կատարվող փոխադարձ պարտականություններ են, վորոնք ապացուցվում են նաև մի շարք փաստերով: Իմպերիալիստական Ֆրանսիան տեհնդորեն ղինում է Լեհաստանին և Ռումինիային, ԽՍՀՄ դեմ կատարվելիք ինտերվենցիայի գրոհի կալոննաներ պատրաստելով: Վերոհիշյալ հոդվածում ընկ. Մյունցենբերգը գրում է՝ «1928 — 29 թվերին Լեհաստանը ստացել է Ֆրանսիայից 150 հազար հրացան, 5000 զնձացիր, կես միլիոն փամփուշտ, 2000 ողանավ, 25 տանկ և այլն:

Մնացած պետությունները, ինչպես որինակ Ռումինիան ու Չեխո-Սլովակիան, նույնպես անընդհատ ռազմամթերք են ստանում: Վերջին տարիներում գլխավոր շտաբների ղեկավարները պաշտոնական յերթեկություններ եյին կատարում (այսպես կոչված «այցելությունները»), բում (այսպես կոչված «այցելությունները»), ԽՍՀՄ դեմ պատրաստվող պատերազմի ռազմական մոբիլիզացիոն ծրագրեր կազմելու նպատակով: 1928 թ. հունիսին ռումինական զենեիալ Մարդաբեակուն, ռումինական շտաբի հրամանատար Օամսոնովիչը և այլ ռումինական սպաներ տար Օամսոնովիչը և յալ ռումինական սպաներ մեկնեցին Վարշավա, Պիսուդսկու և լեհական զենշտաբիստների հետ ԽՍՀՄ դեմ ուղղված ռազմական ծրագիրը մշակելու նպատակով: Ռումինական զենշտաբիստների այդ այցելությունը նաև կապված էր Պիսուդսկու՝ Ռումինիայում 6 շաբաթ անցկացնելու հետ: Պարզված է, վոր իմպերալիստները և գենշտաբները բազմաթիվ կոնֆերանսներ են հրավիրել, վորոնց նպատակն է Ֆերանսներ են հրավիրել, վորոնց նպատակն է պատերազմի ծրագրի մշակումը: Ռումինիայի և Լեհաստանի ռազմունակության ուժեղացման հետ կապված մի շարք փաստեր ապացուցում են, վոր հակախորհրդային պատերազմի պատրաստությունները վոչ թե կրճատվել են, այլ տեհդորեն

շարունակվում են: Լեհաստանի ղեկավարության մասին գերմանական «Դոյչե Տագեսցայտունգը», իր 30 թ. գեկտեմբերի 17-ի №-ում հետևյալ տվյալներն է բերում: Ներկայումս Լեհաստանում ռազմական 20 նոր գործարան է աշխատում, վորոնց թվում 4-ը հրետանի, 2-ը պայթուցիկ նյութերի, 2-ը զենքի, 4-ը ամունիցիայի, 3-ը ռազմական անրոպլանների և 1-ը տանկերի: Բացի սրանից 100 ձեռնարկ զբաղված են ռազմամթերք և ամունիցիա պատրաստելով: Լեհաստանի ռազմաարդյունաբերության մեջ 65 հազար բանվոր է զբաղված: Լեհական ռազմաարդյունաբերության տարեկան արտադրանքը 60 միլիոն դոլլարի յե հավասար: Ռազմական գործարանները ամսական պատրաստում են 20 միլիոն հրացանի և գնդացիների փամփուշտ, 18 հազար հրացան, 60 հազար հրետանու ռումբեր, 500 գնդացի, 20 թնդանոթ, 40 ռազմական ոդանավ: Լեհական ռազմաարդյունաբերության արտադրանքը հնարավոր է պատերազմի ժամանակ հինգ անգամ ավելացնել: Բացի այս բոլորից, Լեհաստանը արտասահմանից էլ ռազմամթերք է ներմուծում: Ծանր հրետանին, խոշոր տանկերը բերվում են Ֆրանսիայից, Զեխտ-Սլովակիայից, իսկ վերջերս նաև Բելգիայից:

Ֆրանսիայում մշտապես գտնվում է ռազմամթերք գնող այսպես կոչված Լեհական մշտական հանձնաժողովը: Լեհական կառավարությունը նորերս Բելգիայում 30 միլիոն մարկի արժողությամբ ձեռքի գնդացիների պատվեր է ավելի Լեհական ամբողջ արդյունաբերությունը ռազմականացված է: Պատերազմ յեղած դեպքում արդյունաբերության մոբիլիզացիան ղեկավարելու համար գոյություն ունի հատուկ ռազմական բաժին: Այդ նույն թերթի հայտարարությամբ, Լեհաստանը ներկայումս ունի, 800 ռազմական սավառակ՝ 1923 թ. 180-ի դիմաց: 1929 թ. ամբողջ դաշտային հրետանին փոխարինված է Ֆրանսիական 75 միլիմետրանոց թնդանոթներով: Սոսեղով ռազմականորեն պատրաստ կադրերի մասին, թերթը ասում է, վոր Լեհաստանում տարեկան 180 հազար նոր ղեկավորներ են պատրաստվում: Զինվորական պատրաստությունն անցնելու համար տարեկան 200 հազար պահեստի ղեկավորներ են կանչվում: Լեհական դպրոցներում հարձակողական պատերազմի սխեմամտիկ պրոպագանդ յե տարվում:

Վերջում թերթը հայտնում է, վոր տարեց-տարի կուտակվող ռազմական և այսպես կոչված մոբիլիզացիոն յետ-պահուսների տարեկան ար-

ժեքը 400 միլիոն ղրոտիի յ՝ հավասար (1 ղրոտին հավասար է 22 կոպեկի)։ Զինվորական միասնությունների ըլուծման, չհաշված զաղտնի ֆոնդերը, ընդհանուր ըլուծելի 42%-ն է կազմում (տեղեկությունները վերցրված են ՏԱՄՍ-ի հեռագրից, «Պրավդա», 21 դեկտեմբերի 1930 թ.)։ Բնական է, Վոր վոչ Լիհաստանը, վոչ Ռուսիայի հնարավորությունները չունեն ինքնուրույն տանել այն ծախսերը, Վոր պահանջում է նրանցից պատերազմին պատրաստվելը։ Այդ պատճառով էլ այդ յերկրները ստիպված են անհրաժեշտ գումարները փնտրել իրենց սահմաններից դուրս և առաջին հերթին Ֆրանսիայում, Վորը հանդիսանում է հակախորհրդային պատերազմ պատրաստող ղեկավար իմպերալիստական յերկիրը։ Ֆրանսիական կոմկուսի որդան «Յուժանիտե»-յում տպված է ընկ. Կաշենի հոդվածը այն փոխառության մասին, Վորը ցանկանում է տալ Ֆրանսիայի Ռուսիային, «1928 թ. — զրում է ընկ. Կաշենը — Ֆրանսիայի Պուանկարեյի կարիքների որոք, Ռուսիային տվեց 1.800 միլիոն ֆրանկ, Վորպիսի գումարը ծախսված է 18 ամսում Ռուսիայի ապարատի ֆաշիզացիան ուժեղացնելու և ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստությունը արագացնելու համար։ Այդ ժամանակ

«Տորգպրոմի» ղեկավարները բանակցում էին Պուանկարեյի հետ, ինտերվենցիան 1930 թվին նշանակելու համար։ Ներկայումս Ռուսիայի թափափորը պահանջում է ամենակարճ ժամանակամիջոցում Ռուսիային 600 միլիոն փոխառու-թյուն տալ։ Միանգամայն հնարավոր է, Վոր ֆրանսիական կառավարությունը, Վորին ոժանդակում են նաև սոցիալիստները, այդ փոխառու-թյունը տալ։ Այդ փոխառությունը տվող մարդիկ, յերեք իրենց դրամը յետ չեն ստանա, քանի Վոր այդ փոխառության հետ կկատարվի նույնը, ինչ Վոր մինչպատերազմյան ցարական փոխառությունների հետ։ Ռուսիայի խոշորագույն ճշմարիտ և պարզ ղեկավար կուրսը կատարող ֆիկ կերպով ընկել է և նրա արժեքը 18 սանտիմից ավել չէ։ Արտասահմանի պարտատերերը կորցրել են արդեն Ռուսիայում իրենց ունեցվածքի $\frac{2}{3}$ -ը։ Ռուսական գյուղացիները տնքում են իրենց ուժերից վեր պարտքերի լծի տակ։ Նրանց, — յուրաքանչյուր հեկտարին ընկնող — պարտքը հազար լեյի յե հավասար։ Վաշխառուները նրանցից հսկայական տոկոսներ են վերցնում («Պրավդա» 23/XII — 30 թ.)։ Ինչպես տեսնում ենք, հակա-խորհրդային պատերազմի պատրաստությունը ընթանում է հետևողականորեն. ֆրանսիական իմ-

պերիալիզմը մի շարք տարիներ անհնդհատ զինում է ՆՍՀՄ-յան հարեան յերկրները, այլ յերկրներ իմպերիալիզմը Նորհրդային Միության սահմանների մոտ հսկայական բանակներ է պահում, վորոնց ընդհանուր թիվը 1,5 միլիոն մարդու յէ հասնում։ Ընկ. Մյունցենբերգը, Դաշինսկու «Կոմունիզմի դեմ» գրքից վերցված տեղեկությունների հիման վրա, վերը հիշված հոդվածում, հետևյալ տվյալներն է բերում իմպերիալիստական բանակների քանակի մասին։ Այդ տեղեկությունները հետևյալ աղյուսակն են կազմում —

ԲԱՆԱԿՆԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պատմությունը	1923 թ.	1928/29 թ.	1,000 բնակչին ընկնողը
Ֆինլանդիա	32	83	10
Նոտոնիա	12	13	12
Լատվիա	20	20	11
Լիտվա	20	20	9
Լեհաստան	265	300	10
Ռումինիա	133	198	11
Բելգամենը	500	584	10,5
Խոր. Միություն	703	562	3,8

Հասկանալի յի, Վոր հման հսկայական բանակ-
ները անհրաժեշտությունը թելադրվում է րացա-
52

ռապես պատերազմի ակտիվ պատրաստությունով, ալյուպես մինչև ատամները զինված բանակների այս քանակը վոչ մի միտք չեր ունենալ Սնհրա-
ժեշտ և նաև նկատի ունենալ, Վոր իմպերիալիս-
տական բանակների քաջաջական աճման հետ,
աճում և նրանց ռազմա-տեխնիկական մակար-
դակը և առաջին հերթին աճում ու կատարելա-
գործվում են զինուճեքը: Բանակների զինում-
ների տեխնիկական աճման հետ, բրազերեն աճում
են նաև իմպերիալիստական պետությունների ռազ-
մական բյուջեները: Համեմատած 1913 թ. հետ,
Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Միացյալ Նա-
հանգները և Յապոնիայի ռազմական բյուջեները
2,3 միլիարդից, 1930 թ. հասել են 5,7 միլիարդ
ռուբլու: Այդ հսկայական գումարների ծախսվում
են ռազմական ու ոչայլին նավատորմերի կառու-
րելագործման, վոչնչացման նորագույն միջոցների,
քիմիայի, վորը հսկայական դեր և խաղալու գա-
լիք պատերազմում, և ժամանակակից բանակ-
ների ռազմական ընդունակությունները ամրա-
ցնելու ու կատարելագործելու այլ միջոցների վրա:
Ներկայիս բանակների զինուճեքների հսկայական
տեխնիկական աճման ավացույց կարող և ծա-
ռայել նրանց կրակի ուժի չափազանց ուժեղա-
ցումը: Այսպես, որինակ, 1913 թ. ֆրանսիական

1 զիվիզիան ունեւր 24 զնդացիր, իսկ ներկայումս — 483, 1913 թ. Միացյալ Նահանգներում 1 զիվիզիան ունեւր 24 զնդացիր, ներկայումս նա ունի 924: Սրա հետ միասին Հպիտի մոռանալ, վոր պատեւրաղմ ծագելու դեպքում, իմպերիալիստների ուղմական արդյունաբերությունը ամենակարճ ժամանակամիջոցում կարող է մի քանի անգամ տասնապատկել պատերազմի ամենակարեւոր միջոցների — այերոպլանների, թնդանոթների, զնդացիրների, տանկերի և այլն քանակը:

Բոլոր այս տվյալները համոզեցուցիչ կերպով ցոյց են տալիս, վոր իմպերիալիստները աշխատում են արագացնել պատերազմի պատրաստումը, աշխատում են վորքան հնարավոր է արագ ու լավ նախապատրաստել նրա համար անհրաժեշտ բանակները, զինելով նրանց ռազմական տեխնիկայի վերջին խոսքով: Այս նախապատրաստումը կատարվում է փակ դռների յետևը, զինվորական առանձնասենյակներում, խաղաղության զինաթափության շուրջը տեղի ունեցող դատարկախոսությունների օրինակներից մեկը կարող է ծառայել 1930 թ. զեկտեմբերին վերջացած զինաթափման նախապատրաստական հանձնաժողովի ժընեի նստաշրջանը (հաշվով — 7-րդը): Այդ զինաթափման ժողով

սարանի» 5 տարվա (1925 թ.-ից) աշխատանքների արդյունքը միայն այն է, վոր զինուժների սահմանափակմանը վերաբերող հարցերը միշտ հետաձգվել են: Միևնույն ժամանակ, տները մեկնած իմպերիալիստական «խաղաղություն ստեղծողները» շարունակում եյին իրենց սովորական — զինուժների ավելացման, գործը: Իրականում մենք տեսնում ենք, վոր իմպերիալիստները զինաթափ լինելու, կամ թեկուզ զինումները սահմանափակելու փոխարեն, շարունակում են անվերջ զինվել: Այս քաղաքականությունը, ինչ խոսք, վոր վոչ մի առնչություն չունի խաղաղության մասին յեղած խոսակցությունների, կեկողի պայմանագրի և այլ դատարկաբանությունների հետ, վորոնց քողի տակ իմպերիալիստները զեշատիչները շարունակում են իրենց գործը: Զինուժների մասին թվերից միլիոնավոր մարդ-զեկություններից ու թվերից միլիոնավոր մարդկանց արյունի հոտ է դալիս, վորոնք նախատեսված են վորպես թնդանոթների միս, նոր իմպերիալիստական, և առաջին հերթին խՍՀՄ դեմ ուղղված պատերազմի համար:

Ինչ են ասում այս փաստերը: Այս փաստերը ապացուցում են, վոր տնտեսական ճգնաժամի ճիրաններում ապրող կապիտա-

լիզմը ուղում ե յեւք գտնել պատերազմի մեջ և բոլոր միջոցներով — թե հասարակական համապատասխան կարծիք ստեղծելով և թե գործնական պատրաստութիւններ տեսնելով — պատրաստվում ե այդ պատերազմին: Այս փաստերը միաժամանակ շատ պարզ կերպով ապացուցում են, վոր իմպերիալիստների պատրաստվող պատերազմի խայթը առաջին հերթին ուղղված կլինի խՍՀՄ դեմ:

XIII. ԱՍՏԾՈՒ ՀԵՏ ԴԱՇԻՆՔ ԿՆՔԱՄ

Այդ պատերազմի համար իմպերիալիզմը ի մի յե հավաքում յերկար տարիների ընթացքում փորձված ու ստուգված իր հիմնական կազմերը: Նա իր կողմն ե գրավում կապիտալիստական սիստեմի տրամադրութեան ներքո գտնվող բոլոր ուժերն ու միջոցները: Վերջապես, նա մոբիլիզացիայի յե յենթարկում իր հինավուրց դաշնակցին — կրոնը, վորպես փորձված մարտիկի, աշխատավոր մասսայի դեմ մղվող պայքարում:

Քրիստոնեական յեկեղեցու դերը հանրածանոթ ե կապիտալիստական (իսկ նախքան այդ՝ ֆեոդալական և միջնադարյան) հասարակակարգի պատմութեան մեջ: Նրա դերը շատ պարզ կեր-

պով արտահայտված ե անվերջ յեղբայրասպան պատերազմներում, վորոնք գլխավորվում կամ բարոյապես նախապատրաստվում եյին յեկեղեցու կողմից (որինակ խաչակրաց արշավանքները): Այդ տեսակետից քրիստոնեյութիւնը, ուրիշ կրոնների հետ համեմատած, ամենահարուստ պատմութիւնն ունի: Դեռ Կոնստանդին կայսեր որոք (324 թ.) տիրող դասակարգերը քրիստոնեյութիւնը դարձրին պետական կրոն, աշխատավոր մասսաների հոգեկան ստրկացման բարդ սիստեմի վերածելով: Այդ բանին ոժանդակում եր քրիստոնեյական վարդապետութեան ամբողջ եյութիւնը, վորը հիմնված ե ստրկական համբերատարութեան և «համամարդկային սիրո» ու «յերկնային իշխանութեան» լպիւր քարոզների վրա:

Պետական իշխող կրոնի վերածվելով քրիստոնեյութիւնը անմիջապէս սկսեց բռնի, միշտ արյունալի ու անխնա միջոցների ոգնութեամբ տալու իր ուսմունքը, այսպէս կոչված հեթանոսութեան իր ուսմունքը, այսպէս կոչված հեթանոս ժողովուրդների մեջ: Նա սրի ու կրակի ոգնութեամբ արմատախիլ եր անում հին «կրոններն ու աստվածները» և փոխանակում այդպիսիները իր ղողմաներով ու արքերով: Աշխարհի և վոչ մի կրոն չունի այնքան արյունալի պատմութիւն, վորպիսին ունի քրիստոնեյութիւնը: Իր աշխար-

հակալական ուղին քրիստոնեյությունը բառացի կերպով զինվորական մարշով և անցել, XI, XII և XIII դարերը խաչակրաց սարսափելի արշավանքների վկաններն են հանդիսանում: Այդ արշավանքները միշտ հայտարարում էյին պապերը և անց էյին կացնում նրանց կողմից նշանակված թագավորներն ու կայսրները: Չեռնանորեն նրանք կրոնական նպատակի էյին իբր ծառայում («փրկչի» գերեզմանի ազատումը), իսկ իրոք, տիրող դասակարգերի ձեռքում աշխարհակալական քաղաքականության շահերին էյին ծառայում:

Բայց և հետագա դարերում քրիստոնեյությունը վոչ պակաս մարտական էր: Հանրաժանութ են նրա կատաղի պայքարը գիտնականների դեմ, դեպի գիտությունն ունեցած անհաշտ վերաբերմունքը, արյունարբու ինկվիզիտորական աշխատանքը: Յուրաքանչյուր գիտություն, վորը քրիստոնեյության իշխանների տեսակետից, հակասում էր քրիստոնեյական ուսմունքի էյության, շիկացրած յերկաթով դուրս էր վոնտվում: XIII դարում, Թոմա Ակվինացու կազմած «Աստվածաբանական ենցիկլոպեդիայում», վորի ուսուցումը պարտադիր էր համարվում մինչև XIX դարի 3-րդ քառորդը, քրիստոնեյության անբարիշտու-

թյունը իր ամենացայտուն արտահայտությունն է գտել: Ամեն մի հերետիկոսություն (ընդվզում՝ տիրող կարծիքի դեմ) — մեղք պետք է համարել, վորի համար մեղավորը պետք է վոչ միայն արտաքսվի յեկեղեցուց, այլ նաև հեռացվի այս աշխարհից՝ մահվան յենթարկվելով: Ռայմսի տիեզերական ժողովը (1157 թ.) վորոշում կայացրեց հերետիկոսներին (գիտության ասպարիզում նորություն մտցնողներ, վորոնց ուսմունքները հակասում են արմատացած պաշտարներին) շիկացրած յերկաթով այրել, և այդ համարվում էր «ամենամարդասիրական», «ամենատանելի» դործը: Վոչ պակաս «մարդասիրական» վորոշումներ են կայացվել և Ոքսֆորդի սրբազան ժողովի կողմից 1166 թ., լատերական ժողովի կողմից 1178 թ. և այլ, քրիստոնեյական կրոնի իշխանների ժողովների կողմից: Քրիստոնեյական յեկեղեցու անհաշտությունը իր արյունոտ արտահայտության ամենածայր աստիճանին հասավ «սրբազան ինկվիզիցիայի» ժամանակներում, յերբ լատրույկների վրա այրում էյին այնպիսի խոշորագույն մարդկանց, ինչպես Ջ. Բրունոյին, Կոպերնիկին և այն ժամանակվա գիտության այլ ներկայացուցիչներին: «Հոմի ոսլահատակի ամեն մի

քար, Ֆրանսիայի, Սպանիայի, Իտալիայի, Գերմանիայի և մի շարք այլ յերկրների դաշտերն ու քաղաքները թրջվել են պապերի թափած արյունով, սևացել են խարույկների ծխից, թաղվել են կաթոլիկ յեկեղեցու թունավոր գոլորշիացումների բարոյական հաշիշի մեջ»։ (Բուխարին «Ֆինանսական կապիտալը պապի քղամիտում»)։

Միջին դարերը կատարած այս փոքր եկսկուրսիան՝ մեզ միայն մոտավոր գաղափար է տալիս այն մասին, վոր միշտ և բոլոր դեպքերում քրիստոնեյական յեկեղեցին հանդիսացել է շահագործող դասակարգերի քաղաքականության գործունյա կենսագործողը, ամենաարյունարբու բռնակալների գործակալը, վորոնց մասին գիտեմ մարդկության պատմությունը, քանի վոր յեկեղեցու պայքարը այլ հավատ ունեցողների դեմ, իմպերիալիստական աշխարհակալական քաղաքականության արտահայտությունն էր հանդիսանում։ Համամարդկային սիրո քարոզներով, քրիստոնեյական յեկեղեցին միշտ ծածկում էր կապիտալիստների և թագավորների բռնության դեմ պայքարի յեկնող աշխատավոր դասակարգերի ամենաարյունալից ջարդերը։ Հենց այդ էր պատճառը, վոր անգլիական (XVII դարում) և ֆրանսիական մեծ հեղափոխության (XVIII դարում)

որոք յեկեղեցու մի շարք ներկայացուցիչներ զլխատվեցին, հենց այդ յեկեղեցականներն էյին, վոր թագավորական ու ֆեոդալական իշխանականների հետ միացած դուրս էյին յեկել հեղափոխական ժողովրդի դեմ։ Յակոբինյանների գլխատինը և Կրոմվելի խիստ պատիժները — հակահեղափոխական վանդեյականների և սև փարաշավորների դեմ — լոկ հեղափոխական ինքնապաշտպանության ակտեր էյին։

Բայց քրիստոնեյական յեկեղեցու պատմությունը, տիրող դասակարգերի հետ ունեցած հետևողական և որդանական համագործակցության տևողական և որդանական համագործակցության նրա պատմությունը լրիվ էեր լինի, յեթե մենք անցնեյինք այնպիսի խոշոր պատմական դեպքերի անցնեյինք այնպիսի խոշոր պատմական դեպքերի կողքով, ինչպես են՝ Պարիզյան կոմունան (1871թ.), համաշխարհային պատերազմը (1914—18 թ.) և մեր 1917 թ. Հոկտեմբերյան Հեղափոխությունը։ Վճռեղ և ռւմ կողմն էյին այն ժամանակ քրիստոնեյական յեկեղեցու սրբազան սպասավորները։ Բոլորին հայտնի յե, վոր նրանք, գեներալ Գալիֆերների, Վիլհելմ և Նիկոլայ կայսրների, Գևորգ Գեորգի, թագավորի և այլն թագադիր ու առանց թագի, մարդկության դահիճների կոմսակիցների շարքում էյին։ Տյերի ազգային գվարդիանների շարքերում նրանք (սրբազան սպասավորները) ուժա-

կոծում էյին թնդանոթներից պարիզյան կոմունար-
ներին: Խաչն ու աստվածաշունչը ձեռքում, ազգա-
յին ու ցեղական ատելութուն տարածելով, նրանք
որհնում էյին միլիոնավոր մարդկանց սպանելը:

Անգամ այս մի քանի փաստերն ապացուցում
են, վոր քրիստոնեյական յեկեղեցին միշտ կանգ-
նած է յեղել աշխատավոր մասսաների ամենա-
վոխերիմ թշնամիների շարքում: Մանավանդ
վերջին կես դարի ընթացքում քրիստոնեյական
յեկեղեցին պարզորոշ կերպով ապացուցել է, վոր
նա հանդիսանում է իմպերիալիստական քաղա-
քականության անցկացնողն ու ոժանդակողը:
Այս մասին խոսում են քրիստոնեյական միսիո-
ներների գործնեյությանը վերաբերվող բազմա-
թիվ փաստերը: Այժմ բոլորի համար պարզ է,
վոր նրանց ամբողջ գործնեյությունը ձգտել ու
ձգտում է հող պատրաստել իմպերիալիստական
պետութունների աշխարհակալ քաղաքականու-
թյան համար: Վոչ վոքի մեջ այժմ կասկած չի
առաջ բերում այն անհերքելի փաստը, վոր քրիս-
տոնեյական միսիոներները խաղացել են ու խա-
ղում են Արևելքի յերկրներում Ֆինանսական և
առևտրական կապիտալի պիոների, գեներալ
շտաբների լրտեսների և իմպերիալիզմի գործա-
կալների դերը:

Պատմությանը անձանոթ ընթերցողի համար,
մենք մի քանի որինակներ կբերենք քրիստոնե-
յական յեկեղեցու այդ «մարդասիրական», «խիստ
մարդկայնական» աշխատանքից:

Որինակ առաջին: 1850-ից մինչև 1864 թ.
Հարավային Չինաստանում ծագեց ու հաղթեց
տայպինգների հզոր գյուղացիական շարժումը:
14 տարի անընդհատ տայպինգները իշխանու-
թյունը պահում էյին իրենց ձեռքում: Համաշխար-
հային կապիտալիզմը, ինչպես նաև Չինաստանը
կառավարող այն ժամանակվա մանջուրական
հարստությունը, շահագրգռված էյին տապալել
տայպինգներին: Այդ տապալման համար հար-
կավոր եր միայն մի ազդանշան, կոչ, «բարոյա-
կան հիմունք»: Յեվ Հարավային Չինաստանի
ապստամբած գյուղացիների հետ արյունահեղ հա-
շիվ տեսնելու ազդանշան տվողի և կազմակեր-
պիչների դերը իրենց վրա վերցրին քրիստոնեյա-
կան միսիոներները: Նրանք միաձայն դիմեցին
իրենց պետութուններին՝ ապստամբներին «կարգի
հրավիրել»: Չինական շուկայում շահագրգռված
իմպերիալիստների միջև տեղի ունեցած յերկար
վեճերից հետո, տայպինգների ազատագրական
շարժումը ճնշելու ղեկավարող դերը ընկավ անգլո-
ֆրանսիական իմպերիալիստներին: Բայց այդ

արյունոտ եղանակով լինում վոչ պակաս դեր խաղաց նաև Հեռավոր Արևելքում անգլո-ֆրանսիական կապիտալի դեմ մրցող ռուսական ցարիզմը։ Ջինաստանի ռուսական ուղղափառ միսսիայի պահանջմամբ, 1861 թվին ցարական իշխանությունը, տալլինգների դեմ կռվելու համար 10 հազար հրացան ուղարկեց։ Ջինաստանում ուղղափառ միսսիան գլխավորող արևմտահայերի տներ Դուրիյ և Պալլադիյ, անվերջ նամակներ էլին ուղարկում թագավորին, պահանջելով ռազմական ուժի միջոցով ճնշել տալլինգների շարժումը։ Ուղղափառ միսսիոներները շտապեցնում էլին ցարին, վորովհետև Ջինաստանի ոտարազդի միսսիաները, ցանկանալով պահպանել և ապահովել իրենց պետությունների համար չինական լայնածավալ շուկան, պահանջում էլին իրենց պետություններից վերջ դնել տալլինգների շարժմանը։ Իրենց նամակներից մեկում ուղղափառ միսսիոներները այսպես էլին դիմում թագավորին. — «Շտապեք միսսիոն-ռեզիդենտ ուղարկել նրա հետ ուղարկեք նաև 2 հազար սվինների նյութական ուժ... Ջինացիների հետ կարելի չե խոսել միայն փառաբանությունով ու ունեցությունով»։

Նման դիմումներ էլին ուղարկում իրենց պետություններին և այլ քրիստոնեական միսսիա-

ները։ Միսսիոներներին կոչը ազդանշան էր միջազգային ռեակցիայի համար։ Ջինելով չինական իշխանությունը, ռեակցիոն ցույց տալով նրան դրամով, թնդանութներով ու ծովային զորքով, իմպերիալիստները գաղանաբար մաքրեցին իրենց հաշիվները տալլինգների հետ։ Այս գաղանությունների հետևանքը, մի քանի միլիոն չինական գյուղացիներին վոչնչացումն էր։

Որինակ յերկրորդ։ Վոչ պակաս արյունալի դեր խաղացին քրիստոնեական միսսիոներները XX դարի սկզբում, Ջինաստանում բոկայորների շարժումը ճնշելու ժամանակ։ Այդ արյունոտ գործում գլխավոր դահիճի դերը ընկավ ռուսական բռնակալությանը։ Չուր չեր, վոր Հոմի պապը, վորն այն ժամանակ կոչ էր անում խաչակրաց արշավանք կազմակերպել «դեղին վտանգի» դեմ, շնորհակալություն հայտնեց Ռուսաստանի վերջին կայսրին՝ շարժումը ճնշելու համար։ Ռուսական զորքերն այն ժամանակ միքանի հազար ապստամբներ վոչնչացրին։

Որինակ յերկրորդ։ Վոչ պակաս ակտիվություն ցուցաբերին միսսիոներները Ջինաստանում 1925—27 թթ. նրանք բացարձակ կերպով կոչ էլին անում վոչնչացնել չինական հեղափոխական շարժումը։ Ներկայումս էլ, յերբ այդ շարժումը

հսկա չափերի յե հասել, նրանք կոչ են անում
 իմպերիալիստներին, ռազմական ուժով վոչնչաց-
 նել Չինաստանի խորհրդային շրջանները: Չի-
 նական բանվորները և գյուղացիները ճնշումը,
 Չինաստանի խորհրդային շրջանները կատարվող
 ինտերվենցիան, մեծ չափով նախապատրաստված
 են քրիստոնեական միսսիաների կողմից, վորոնք
 շարունակում են խաղալ միջազգային իմպերիա-
 լիզմի ազենտուրայի դերը, շարունակում են
 իրենց պատմականորեն ստուգված — ռեակցիայի
 պիոներները, իմպերիալիստական պատերազմների
 կազմակերպիչների և խաչակրաց արշավանքների
 քարոզիչների — արյունալի միսսիան: Բայց,
 նրանց գործնեյությունը վայրը միայն Չինաս-
 տանը չի: Նրանք իրենց ճիրանները տարածել են
 ամենուրեք, վորտեղ իրեն համար ճանապարհ ե
 հարթում «առաջավոր» յերկրների իմպերիալիզմը:
 Պրոֆեսսոր Կորովինը իր «Իմպերիալիզմն ու
 կրոնը» հոդվածում («Պրավդա» 22/IV-30 թ.),
 միսսիոներական գործնեյությունից մի շարք վի-
 ճակագրական տեղեկություններ ե բերում, վոր-
 պիսի գործնեյությունը ընդգրկել և Փոքր Ասիան,
 Յապոնիան, Կորեյան, Մանջուրիան, Չինաստանը,
 Սիամը, Հնդկաստանը, Հարավային և Կենտրոնա-
 կան Աֆրիկան և այլն: «Վատիկանի այգիներում

— գրում ե պրոֆ. Կորովինը — 1925 թ. հա-
 մաշխարարհային միսսիոներական ցուցահանդես
 եր կազմակերպված: Այդ առթիվ հրապարակված
 նյութերն (վորպիսիները վերաբերում են միայն
 կաթոլիկ միսսիաներին) հետևյալ պատկերն են տա-
 լիս. արտասահմանյան միսսիան երում
 զբաղված են 12.712 քահանա, 4095 հրա-
 հանգիչ, 24.162 կույս, 65.641 ուսուցիչ-
 կատեխիզատոր. այդ միսսիաներն ի-
 րենց տրամադրության տակ ունեն
 66.397 կայան, 44.535 յեկեղեցի, 40 հա-
 ղարից ավել ստորին դպրոցներ,
 1.700 հաղար աշակերտներով, 462
 պրոֆդպրոց, 875 բարձրագույն դպրոց,
 144 միջնակարգ, 8 համալսարան և
 1650 «զանազան հիմնարկներ», ինչպե ո
 որինակ, վորբանոցներ, ագարակներ,
 ֆաբրիկներ, արհեստանոցներ, դեղա-
 աններ, հիվանդանոցներ, տպարաններ:
 Այսպիսի յեն փարաջավոր իմպերիալիստների
 իրական ուժերը, դա դեռ միայն կաթոլիկ յեկե-
 ղեցու ուժերն են: Միջազգային կապիտալիզմի
 դործակալների այս բանակը հատուկ սովորեցվում
 ու վորակավորվում ե այն աշխատանքի համար,
 վորը ամեն մի իմպերիալիստական պատերազմի

առաջին խոսքն է հանդիսանում, այն է — այդ գաղութներում հեղափոխական շարժումը խեղդելու աշխատանքը: Գաղտնիք է, վոր իմպերիալիզմի բոլոր գաղութային պատերազմները, նրա բոլոր ինտերվենցիաները կապիտալիստական գաղութային և կիսագաղութային յերկրների ապստամբած մասսաների դեմ, պատրաստվել են նախապես քրիստոնեական միսսիաներում, վորոնք հանդիսացել են ու մինչ այժմ հանդիսանում են պլևափոր շտաբների աջ թևը: Այս բոլոր փաստերից հետո, վորոնք պարզում են մարդկության պատմության մեջ խաղացած, քրիստոնեական յեկեղեցու իրական դերը, վոչ մի հիմք չկա կասկածել, վոր նա իրոք զբաղվել է «յերկրային գործերով», վոր նա մոտ է կանգնած պատերազմներին, վոր նա հանդիսանում է այդ պատերազմները նախապատրաստելու և անցկացնելու գործի ակտիվ մասնակիցը: Քրիստոնեությունն ամբողջ պատմությունից տասնյակ ու հարյուր միլիոնավոր մարդկանց դիակներին հոտ է փչում, վորոնք սոհ են գնացել հանուն նրա, նրա դրոշմամբ զոհվել են արյունալից պատերազմներում, այրվել են ինկվիզիցիայի խառույկների վրա, ընկել են անխնա, դաժան «խաչակրաց արշավանքներին» ժամանակ, իմպերիալիս-

տական պատերազմներում, հեղափոխական շարժումները ճնշվելու հետևանքով, Հոկտեմբերյան հեղափոխության դեմ պատերազմելիս և այլն: Քրիստոնեական յեկեղեցին (մենք նկատի ունենք նրա բոլոր ճյուղավորումները) իր ամուր կապը յերբեք չի կտրել տիրող դասակարգից, յերբեք հեռու չի մնացել նրանց աշխարհակալական պատերազմներից, քանի վոր ինքը խոշոր հարստությունների տեր է հանդիսացել ու հանդիսանում է (քացառութեամբ իՍՍՀՄ), խոշոր հողատերերի, վանքերի, հյուրանոցների, առևտրական ձեռնարկների, դրամական և այլ կապիտալների և այլն դերը: Նա որգանական կերպով հյուսված է մասնավոր սեփականութեան, պետութեան հետ, չափազանց շահագրգռված լինելով վերջինիս խոշորանալու մեջ՝ գաղութային և այլ պատերազմների միջոցով, շահագրգռված է այդ պետութեանը պաշտպանել աշխատավորական դասակարգերի հեղափոխական շարժումներից, և վերջինները իմպերիալիստական պետութեանների յնտերվենցիաների ու արյունալի եքսպլոիցիատիվների ոգնութեամբ ճնշելու մեջ: Դրա համար ել այնպիսի «դեպքերը» ինչպես Հոմի պապի մի արք յեկույթները խորհրդային Միութեան դեմ, բոլորովին ել անսպասելի էին, չնայած, վոր պապի

գլխավորված կաթոլիկ և ուղղափառ յեկեղեցու միջև դարավոր թշնամութիւն գոյութիւն ունի (վորին այժմ պաշտպան է դուրս յեկեղ պապը)։ Այսպիսով, Պիյ XI պապի յեկույթը բնորոշ է այն տեսակետից, վոր յերբ խնդիրը վերաբերում է մասնավոր սեփականութեան պաշտպանութեանը, յեկեղեցական կաղմակերպութեան տարբեր ճյուղավորումների միջև յեղած թշնամանքը մի կողմ է թողնվում։ Դեռ 1922 թ. պապը ճգնում էր զրդել իմպերիալիզմին, պատերազմի յեկեղութեանը խորհրդային հանրապետութեան դեմ։ Ճնշմովայի կոնֆերանսի ժամանակ պապը զիմեց իմպերիալիստական պետութիւններին, պահանջելով միատեղ դուրս գալ խորհուրդներին յերկրի դեմ, սակայն կաթոլիկական յեկեղեցու առաջնորդի այդ յեկույթից վոչինչ դուր չեկավ, այն ժամանակ դեռ չափազանց թարմ էյին 1918—19 թվականների արյունոտ ինտերվենցիայի հետքերը։ Յեւ պապը իրեն գործնելութիւնը խորհրդային յերկրի դեմ փոխադրեց կոնտր ռազմեղակաների կուլիսների յետեւ, բուրժուական կառավարութիւնների և գլխավոր շտաբների կարիսկաները, Դեռևս լին խորհրդային պատերազմի որոք ներկա պապը վորն այդ շրջանում պապի նունցիան («զիվանական ներկայացուցիչ») եր Վարշավայում, զրադ-

ված եր խորհրդային հանրապետութիւններին տերիտորիայի վրա լրտեսութիւն կաղմակերպելու ամենաակտիվ գործնելութեամբ։ 1919 թ. Մինսկում ձերբակալված «մայր տաճարի» գլխավոր ահաճառ Ուսասը իր ցուցմունքներում հայտնել է, վոր Ախիլը Ռատտին (այսպէս եր կոչվում էին ժամանակ ներկա պապ Պիյ XI) իրեն դրամ ուղարկելիս յեղել հակախորհրդային աշխատանքի համար։ Այդ գործնելութեան համար հետագայում, յերբ Նունցիյ Ռատտին դարձավ պապ Պիյ, Ուսուսը առատ վարձատրութիւն ստավ — նա նշանակվում եր մի շարք պատասխատու պաշտոններում և վերջ ի վերջո ստանձնեց Լատիկանի գրադարանապետի պաշտոնը։ Տարիներ էյին անցնում, իսկ իմպերիալիստների հույսերը՝ խորհրդային կարգերը փոխելու, ՄԱՄ կապիտալիստական աշխարհի գերկը երադառնալու հույսերը չեյին իրականանում։ Խորհրդային յերկրը հաղթանակը հաղթանակի տեսից տանելով, վերջապէս անցավ սոցիալիստական մեծ արշավի՝ բոլոր ֆրոնտներում։ Այդ ժամանակում իմպերիալիստները մտան տնտեսական ու ճգնաժամի շրջան։ Մենք արդեն տեսանք, որ նրանք ճգնում են դուրս գալ այդ ճգնաժամից իՄՄ հաշվին, հակախորհրդային պատե-

րազմ կազմակերպելով: Նրանք կատաղի կամպա- Վերջնական պայքը բողոքի, խորհրդային Միու-
նիա տարան սոցիալիստական շինարարության թյան դեմ բարոյական «խաչակրաց արշավանքի»
յերկրի դեմ, իրենց պաշտպան հայտարարելով, որ եր անուամբ, ի հարկե աչքի առաջ ունենալով
Խորհրդային իշխանության կողմից իբրև թե ԽՍՀՄ դեմ իմպերիալիստական ինտերվենցիա
հալածվող կրոնի և ուղղափառ յեկեղեցու: Այդ կազմակերպելու գործը շտապեցնելը:
կամպանիայի հերոսը նորից Պիյ պապը հանդի- Բայց պապի այդ յեկույթն եւ անհաջող անցավ:
սացավ: Պապը, իսկ նրա յետևից անգլիական նա ջարդ ու փշուր յեղավ միջադպրային պրոլե-
յեկեղեցու առաջնորդ Կենտրոնների յեպիսկո- տարական համերաշխության գրանիտե ամրոցին
պոսը և քրիստոնեյության շատ ուրիշ իշխանները, ղարնվելով: Այդ յեկույթները մերկացվեցին բան-
մեկը մյուսի յետևից «քրիստոնյա ժողովուրդ»- ղոր դասակարգի կողմից՝ լենինյան կոմկուսակ-
ներին» կոչ ուղղեցին:

Ինչ ասես, վոր չեք գրվում պապի այդ կոչերից իր կազմակերպելու: Պապի կողմը չպահեցին
մեջ, հազար ու մի կեղծիքներ տարածելով Խոր- նաև յեկրոպական յերկրների վորոշ շրջաններ,
հրդային յերկրի մասին — իբր այնտեղ ճնշվում համարելով, վոր պապի «խաչակրաց արշավանքը»
են կրոնները, «սոսկալի սրբապղծական հան- չափադանց մերկացած ե, ուրեմն և հակախոր-
ցանքներ են կատարվում» յեկեղեցու դե, և վոր հրդային պատերազմ կազմակերպելու համար
«բոյլընդինները վոչ միայն վերացրել են կիրա- վտանգաբեր միջոց և Սակայն, իմպերիալիստա-
կին, այլ այնտեղ (ԽՍՀՄ) ավելի հեռուն են կան թերթերի մեծամասնութունը որ ու գիշեր
գնացել, ստիպելով բանվորներին գործարաննե- ձայնում եյին ԽՍՀՄ դեմ արշավելու մասին՝
րում — կանանց ու տղամարդկանց — դիմումներ պապի մի քիչ վոչ պարզ լեզուն իմպերիալիս-
ստորագրել ձևականորեն ասածուց հրաժարվելու տական վայնշինայի լեզվի վոր խաղերով:
ու նրան ատելու մասին, սպառնալով հակառակ Բուրժուական թերթերից շտաբը գրում եյին,
դեպքում գրկել հացի, հագուստի և բնակարանի վոր «խաչակրաց արշավանքի» պատճառը հան-
քարտերից» և այլն և այլն:

դիսանալու յին վոչ թե կրոնը հալածելը, այլ

ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության հաջողությունները: Այդպիսով նրանք պատուով ելին քողը և ցուցադրում պապի իրական, իմպերիալիստական դեմքը: Պապի հնարածը՝ ԽՍՀՄ մեջ կրոնը հալածելու մասին, հերքվել են մի շարք կրոնական կազմակերպությունների և մասնավորապես ԽՍՀ Միության մեջ յեկեղեցիների պետերի կողմից: Բայց պապը, վորպես իմպերիալիզմի հավատարիմ դաշնակից, չէր հանգստանում: Իմպերիալիստների պատվերը նա շարունակում էր աննկուն ենեղբայրով: Անհաջող «խաչակրաց արշավանքից» մի քանի ամիս անց պապը հանդես գեկավ այս անգամ ավելի սոսկալի ու կրոնական ֆրադեռլոնգիայից գուրկ առաջարկով: Նա դիմեց «կուլտուրական» յերկրների բոլոր պետություններին, կոչ անելով՝ ԽՍՀՄ դեմ ընդհանուր ֆրոնտ կազմել, նշելով, վոր պետք է հատուկ ուշադրություն դարձնել բանվորական շրջաններում տարվող հակախորհրդային պրոպագանդայի վրա, նա գործնական առաջարկներ եր անում — այդ շրջաններում հատուկ կինո-նկարներ ցուցադրել, կազմակերպել միջազգային ռաբրոյականության լիգա», վորի անդամները գործարաններում ու ֆաբրիկներում հատուկ արտոնություններ են վայելելու և այլն: Պապի կար-

ծիքով, բուրժուական կուսակցությունների բոլոր թերթերը պետք է ժառակարարվեն համապատասխան նկարներով ու հոդվածներով: Յեվրոպայի, Ամերիկայի և Ասիայի ամեն մի քաղաքում պետք է դանազան հավատ ունեցողների ներկայացուցիչներից գործողության կոմիտեներ կազմակերպվեն՝ հակախորհրդային կամպանիան դեկավարելու համար: Պապը միաժամանակ հաշվի յեր առնում, վոր այդ հսկայական ծրագիրն իրագործելու համար խոշոր գումարներ են հարկավոր: Յեվ նա առաջարկում եր պետություններին, խոշոր ֆինանսիստներից ու բանկերից միլիոններ, խոշոր գումարներ պահանջել՝ բոյլընկզմի դեմ պայքարելու նպատակով: Վերջում պապը պետք է համապատասխան յեզրափակումներ անել՝ Խորհրդային Միության դեմ ուղղված ձեռնարկումներից: Ընդունելով, վոր Խորհրդային Միությունը հզոր պետություն է հանդիսանում, պապը յեզրափակում ե՝ «Բոյլընկզմը վոչնչացնելու համար մի միջոց կամիայն — դա պատերազմն է: Ահա թե ինչումն է կայանում Պիյ պապի դերը հակախորհրդային պատերազմ կազմակերպելու գործում: Ինչպես տեսանք, նա իր այդ դերը տանում է հետևողականորեն և

գործունյա կերպով: Նրա այդ դերը ամբողջապես մտնում է քրիստոնեյության իմպերիալիստական պրակտիկայի հարուստ արսենալը: Այժմ, յերբ ամբողջապես ի հայտ է բերված հակախորհրդային պատերազմի նախապատրաստումը, յերբ այդ նախապատրաստումը իր արտահայտությունն է դադարել ինտերվենցիայի կոնկրետ ժամկետները նշանակելու մեջ, մեզ առանձնապես անհրաժեշտ է հաշվի առնել այն դերը, վորն արդեն խաղացել ու խաղալու յեն վոչ միայն քրիստոնեյական, այլ նաև մյուս կրոնները խորհրդային Միության դեմ տարվող պայքարում: Իմպերիալիզմը նրանց մորթիլիզացիայի յե յենթարկում՝ վորպես իր ամենահավատարիմ դաշնակիցների: Քրիստոնեյական յեկեղեցին արդեն հայտնաբերել է իր ընդունակությունները: Քանիցս նա ճգնել է ընդհանուր լեզու գտնել իր ճյուղավորումների միջև՝ խորհրդային յերկրի դեմ մղվող պայքարի ընթացքում:

Այս բանի փայլուն ապացույցը կարող է ծառայել պապի յեղույթը՝ ՆՍՀՄ մեջ իբր հալածանքի յենթարկվող ուղղափառ յեկեղեցու ոգտին: Սոցիալիզմն ինքնին վանում է ամեն տեսակ կրոն, քանի վոր կրոնը հանդիսանում է աշխատավոր դասակարգերի ամենաանխնա, ամենակատաղի թշնամին: Կրոնը ժամանակակից

կապիտալիզմի իմպերիալիստական քաղաքականության զենքն է: Կրոնի դրոշի տակ ի մի յեն հավաքվում ամբողջ աշխարհի հակահեղափոխական ուժերը, վորպեսզի նոր արյունալի պատերազմում հոշոտեն աշխարհի առաջին սոցիալիստական պետությունը: Իր իմպերիալիստական եյության ամենապարզ արտահայտությունը քրիստոնեյական կրոնը, քրիստոնեյական յեկեղեցին հանդես է բերել ու բերում է աշխատավորական մասսաների անխնա վոչնչացման ասպարիզում, իմպերիալիզմի հետ արյունալի պայքարում միավորված ու նրա հետ ամուր դաշինք կապած, ինչպես նաև պատերազմ պատրաստելու գործում, վորպես խոշոր կազմակերպչական փորձառություններ:

Իմպերիալիզմի հետ ունեցած այդ դաշինքը ուժի մեջ կմնա մինչև կապիտալիստական հասարակակարգի վերջին որը, յերբ պրոլետարական հեղափոխության կրակում կապիտալիզմի հետ միասին կխորտակվի նաև կրոնը:

Իմպերիալիզմի է կրոնի այդ դաշինքը բոլոր ուժերով ձգտում է հետաձգել իր պատմականորեն պատրաստվող կործանումը: Ահա թե ինչու նա այդպես տենդորեն հակախորհրդային պատերազմի յե պատրաստվում: Ահա թե ինչու այդ

պատերազմի նախապատրաստմանը այնքան ակտիվ մասնակցութիւնն է հայտնաբերում քրիստոնեայական յեկեղեցին:

Մարդատյացութեան քարոզը, պատերազմի քաղաքականութեան քարոզը, այդ քաղաքականութեան թարգմանութիւնը կրօնի լեզվի, աշխատավոր մասսաների գիտակցութիւնը մթազնեկուն պատակով, այս ամենը բոլոր յերկրների տերտերների մասնագիտութիւնն է: Զուր չէր, վոր 1915 թ. ռուս ժուրնալիստ բարոն Բորիս Սայդելը «Ռազվեդչիկ» ժուրնալում գրել էր, վոր «քրիստոնեայութիւնը ամենապիտանի կրօնն է պատերազմի համար»: Յեւ այս ճշտվել է ու ճիշտ է՝ բոլոր 20 դարերի քրիստոնեայութեան համար: Այս առանձնապէս ճիշտ է 1914—18 թ.թ. իմպերիալիստական պատերազմի շրջանի քրիստոնեայութեան համար, յերբ հոգևորականութիւնը, բանակում գտնվելով, խաչն ու աստվածաշունչը ձեռքին՝ հրում էր զինվորներին այդ վոճրագործական սպանդանոցը, յերբ դանազան յերկրների հոգևորականութիւնը ընդունակ էր ամենասարսափելի բոսորներին և պատերազմի որերին ուրախ դեպք ընդունել: Աստծուն ուղղած հատուկ ազդեցներում տերտերները քարոզում էին հենց նույն քրիստոնեայական ժո-

ղովորդների փոխադարձ վոչնչացումը: Այսպէս, որինակ, պատերազմի տարիներին Բեռլինի արքայեպիսկոպոսը այսպիսի ազդեց էր հորինել, «Տե՛ր աստված, որ հնիւր մե՛ր սվինները և խորը սւղղիւր նրանց մե՛ր թշնամիներին փորը: Ծակիւր միջից նրանց լպիւրշ փորե՛րը: Որ հնիւր մե՛ր թնդանոթները, վոր պեսզի նրանք կարողանան ջախջախել մե՛ր թշնամու գլուխը: Որ հնիւր մե՛ր զենքերը, վոր պեսզի մե՛ր թշնամիները խեղդվեն իրենց սեփական արյան մեջ»:

Դա — առանհինգ տարի առաջ էր, Բայց միթե այժմ քրիստոնեայական յեկեղեցին պակաս վոգեվորութեամբ, պակաս տրյունարբութեամբ և պատերազմի կանչում: Նրա առանձին հոգևորականները գերազանցում են այդ արյունոտ արհեստի մեջ: Ռազմական շտաբների հետ միաժամանակ քահանաներն էլ իրենց զենքն են ուժգին պատրաստում, իրենց քրիստոնեայական արսնալը հարմարեցնում հակախորհրդային արշավին:

1930 թ. հուլիսին թերթում հրատարակված էր լեհական կսենձ Զերսկու կազմած նոր ռազմական ազդեցը՝ «Տե՛ր աստված! ուժ տուր մե՛ր ձեռքերին: Ամենակարող ուժ

շնորհիւր մեր թնդանոթներին, չդավա-
ճանող դիմաց կանու թյուն՝ մեր տան-
կերին, անտեսանելի ու թյուն — այերո-
պլաններին, ամեն տեղ անցնելու ըն-
դունակ ու թյուն — հեղձուցիչ դադե-
րին: Շնորհիւր նրանց այդ բոլոր
տվյալները, ոտեր. թող թշնամու
փամփոռ շտնեքն ու գրանատները հի-
վանդ վոչխարներին նման թափվեն
խոտի վրա, իսկ մերոնք թող վազրերի
նման խուժեն թշնամու սիրտը, թող
ծծեն նրանց ամբողջ արյունը: Կու-
րացրու մեր բոլոր թշնամիներին,
աստված:

Այսպես եք բխտոնեյական յեկեղեցին կատա-
րում իմպերիալիզմի պատվերը: Նա թափով աշ-
խատում ե հակախորհրդային պատերազմի նախա-
պատրաստման ամհնադժվարին — հասարակական
կարծիք — կազմակերպելու ասպարիզում: Թագնվե-
լով կրոնական քողի տակ, նա տենդադին աշխա-
տում ե կործանվող, պատմականորեն տապալման
յենթակա կապիտալիզմի և նրա հավատարիմ դաշ-
նակցի՝ կրոնի պահպանման համար:

Սրվող անտեսական ճգնաժամը ավելի ու ավելի
արադորեն քաղաքական ճգնաժամի յե վերածվում,

մերողջ կապիտալիստական սխտեմի ճգնաժամի
հրում ե իմպերիալիստներին դեպի նոր պատե-
ազմ: Այս պատերազմը նախ և առաջ ուղղված ե
հնելու ԽՍՀՄ դեմ: Յեվ այդ պատերազմում ամ-
ողջ աշխարհի աշխատավորությունը կհանդիպի
բ դասակարգային թշնամուն, վորի մի ձեռքում
ցված ե խաչը, իսկ մյուսը գնդացիրն ե բանեցնում:

ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ — ԱՄԲՈՂՁ ԱՇ-
ԽԱՐՀԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆ Ե

ԽՍՀՄ և ամբողջ աշխարհի աշխատավորությունը միակ պատասխանը՝ սոցիալիստական շինարարության յերկրի դեմ՝ պատրաստվող նոր խնտեր-վենցիային, պետք է լինեն — յերկրի պաշտպանության ուժեղացումը, հակախորհրդային պատերազմ սլատրաստելու իմպերիալիստական քաղաքականության դեմ՝ ամբողջ աշխարհում պրոլետարական հասարակական կարծիքի անդուլ մոբիլիզացիան, իմպերիալիստները ցանկանում են խանգարել սոցիալիստական հնգամյակի հաղթանակների իրագործումը, ցանկանում են վոչնչացնել խորհրդային կարգերը և այդպիսով, դուրս գալ (ԽՍՀՄ հաշվին) համաշխարհային տնտեսական ճգնաժամից, վորը սրել է ու հայտաբերել կապիտալիստական սիստեմի հակասությունները և արագորեն փոխվել քաղաքական ճգնաժամի Ահա թե ինչու մի շարք կապիտալիստական յերկրներում կապիտալիստական հասարակարգի

հիմնական հակասությունները (ընդհանուր առմամբ կապիտալիզմի և ԽՍՀՄ միջև) լուծել հակախորհրդային պատերազմի ոգնություն — այդ տենդենցը դրվում է առաջին պլանի վրա և յետ են մղվում այսպես կոչված «խաղաղ» տենդենցները, վորոնց նպատակն է զարգացնել տնտեսական հարաբերությունները կապիտալիստական պետությունների և ԽՍՀՄ միջև:

Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-յան մեջ հնգամյակի առաջին յերկու տարվա ընթացքում խորորագույն տնտեսական հաղթանակներ են տարված թե արդյունաբերության և թե անհատական գյուղացիական տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման ասպարիզում, այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-յան մեջ ամբողջապես վոչնչացված է գործադրկությունը, և որ ըստ որի լավանում է աշխատավոր մասսաների տնտեսական և կենցաղային դրությունը — բոլոր կապիտալիստական յերկրներում բառիս լայն իմաստով խորանում է ավերածությունը, աճում է գործադրկությունը, իջեցվում է բանվորների աշխատավարձը, աճում են գյուղացիների վրա ուժից վեր հարկերը, աճում է ժողովրդական մասսաների ընդհանուր աղքատացումը: Բոլոր այս հանգամանքները հատուկ, բացառիկ կերպով ընդգծում են սոցիալիստական

սիստեմի անչափ առավելութունները կապիտա-
լիստականի հանդեպ: Բանվոր դասակարգի այս
հաջողութունները խորհրդային յերկրում հան-
գիստ չեն տալիս իմպերիալիստներին, քանի վոր
մեր հաջողութունները, կապիտալիստական հասա-
րակարգի դեմ պայքարող աշխատավոր մասսա-
ների համար ռազմական զորոշի դեր են կատարում:

Դրա համար ել իմպերիալիզմը ճգնում է արա-
դացները—ՆՍՀՄ վոչնչացումը, զրկել ամբողջ աշ-
խարհի բանվոր դասակարգը նրա հզոր բարոյա-
կան, բազայից, նրա հայրենիքից, վորպիսին հան-
դիսանում է խորհրդային Միութունը: Ահա թե
ինչու աշխատավոր մասսաները պետք է պատ-
րաստ լինեն իմպերիալիստներին ուժգին հակա-
հարված տալու և, ՆՍՀՄ վրա հարձակվելու
դեպքում հակախորհրդային պատե-
րադմը պետք է վերածել քաղաքացիա-
կանի, ընդդեմ բոլոր յերկրներին իմպե-
րիալիստներին: ՆՍՀՄ բանվորներն ու գյու-
ղացիները դեռ չեն մոռացել ու չեն մոռանա առա-
ջին ինտերվենցիան: Իմպերիալիստական Ֆրան-
սիան և այդ ինտերվենցիայի այլ մասնակիցները
1918—19 թ. տասնյակ ու հարյուր հազարավոր
աշխատավորներ արյան մեջ խեղդեցին, կրակով
ու սրով անցնելով այն ժամանակ դեռևս յերի-

տասարդ խորհուրդներ ի հանրապետության դաշ-
տերով ու քաղաքներով: Ամբողջ աշխարհի պրո-
լետարական ու գյուղացիական մասսաները հի-
շում են միջազգային բուրժուազիայի այդ չա-
րագործութունը խորհուրդներին յերկրի, խորհր-
դային Չինաստանի և միջազգային պրոլետարա-
կան հեղափոխական շարժման դեմ գործած բոլոր
արյունալի վոճրագործութունները թվել դժվար է:
Իմպերիալիստական ինտերվենտների ծրագրերը
ամբողջովին մերկացված են, հակախորհրդային վո-
չնչինայի միջազգային բանդան մերկացված են ա
հնարավորութուն ունեցավ նախքան «Պրոմպար-
տիայի» դատավարութունը և դրանից հետո համոզ-
վել, թե ինչ տպավորութուն գործեց ամբողջ աշ-
խարհի աշխատավորության վրա նրա հանցագործա-
կան ինտերվենցիա խաղալը: Բողոքի ավելի բուռն
ցույցեր, ՆՍՀՄ և կապիտալիստական յերկրների
բանվորների և գյուղացիների ավելի զայրույթով
լի յելույթներ, վորոնք պահանջում են ին անխնա
կերպով հաշիվները մաքրել «Պրոմպարտիայի» հա-
կահեղափոխական գործակալների հետ, վաղուց չե-
լին յեղել: Բոլոր յերկրներում տեղի ունեցած բան-
վորական ժողովները տասնյակ հազարավոր բա-
նաձևերով վկայեցին միջազգային աշխատավորա-
կան մասսաների պատրաստականութունը՝ պաշտ-

պանել ԽՍՀՄ-ը՝ Մի շարք կապիտալիստական յերկրներին ինտելիգենցիայի լավագույն մասին, խորհրդային յերկրին գիտնազաններին և գրողներին հարյուրավոր և հազարավոր կազմակերպություններին յեւրոպեաները զայրույթ և զզվանք հայտնեցին հակախորհրդային պատերազմի կադմակերպիչներին։ Բոլոր այս ցույցերին, յեւրոպեաներին, բոլոր յերկրներին աշխատավորների բողոքներին միջից աննկուն կամք եւ յեկնում պաշտպանել ԽՍՀՄ-ը իմպերիալիստների հարձակումից, վորոնք ցանկանում են խանգարել սոցիալիստական հասարակակարգ կառուցող Խորհրդային Միության բանվորների և գյուղացիների խաղաղ աշխատանքը։

— Թող իմանան պրոլետարական դիկտատուրայի թշնամիները—ասում և Լենինգրադի պրոֆմիությունների Խորհրդին վորոշման մեջ,—վոր ով փորձե խանգարել սոցիալիստական շինարարությունը, ուժգին հակահարված կստանա Կոմունիստական Կուսակցության և նրա Կենտկոմի շուրջը համախմբված աշխատավոր մասսաներին կողմից։

— Ի պատասխան ինտերվենտներին ճիգերի՝ մեկ պատերազմ փաթաթել, «Կարմիր Պուտիլովցի» 27 հազար բանվորները հնգամյակի 3-րդ տարին հայտարարում են յերկրի

պաշտպանության հարվածային տարին։ Այն որը, յերբ հակառակ Խորհրդային Միության գործ դրած բոլոր խաղաղասիրական ջանքերին, բանվոր դասակարգը իր գոյության իրավունքը ստիպված կլինի վորոնել ռազմի դաշտում, մենք, առանց տատանվելու ու յերկար մտածելու կանցնենք նրա առաջավոր մարտիկների շարքերը։ Մենք կկարողանանք մեր խաղաղ լաբորատորիաները վերածել—ծողովուրդներին ու դասակարգերին բախտը վորոշող ճակատամարտին խրամատների ու տրանշեյների և մեր գիտնականի գրիչը—կդառնա մարտիկի հրացան, — հայտնում են ԽՍՀՄ սոցիալիստական շինարարությանը աջակցող՝ գիտության ու տեխնիկայի աշխատավորների համամիութենական Ասոցիացիայի (Վարիտսո) գիտնականները։

— Յես կոմունիստ չեմ,—գրում և յեվրոպական հռչակավոր գրող Ռոմեն Ռոլլանը — բայց յես վորջունում եմ հնգամյակի համար տարվող հերոսական պայքարը։ Թող կործանվեն դավադիրները։ Չեւքերը հեռու Խորհրդային Միությունից!», «Յեթե մի որ սպառնան ԽՍՀՄ-յանը— ով ել լինի նրա թշնամին, յես կանցնեմ ԽՍՀՄ-յան կողմը»։

ԽՍՀՄ նորերս այցելած հոլանդական յերկաթուղայինների պատվիրակությունը — բաղկացած

չորս կոմունիստից, հինգ անկուսակցականից, մեկ սոցիալ-դեմոկրատից և մեկ կաթոլիկից, համոզվելով սոցիալիստական շինարարութեան խոշոր հաջողութեանները մեջ քերականներն փողջունում են իՍՍՀՄ աշխատավորութեանը — «Մենք կշաղկապենք իՍՍՀՄ պաշտպանութեան պայքարը հոլանդական բանվորների անմիջական շահերի պաշտպանութեան պայքարի հետ, միաժամանակ նաև շնորհաշինի հակաիմպերիալիստական և ազատագրական շարժմանն անպայման ոժանդակելու հետ» — կեցցեք իՍՍՀՄ!

— Կորչի իմպերիալիզմի ռազմատենչ քաղաքականութեանը!

— Կորչի սոցիալ-դեմոկրատները և կաթոլիկների առաջնորդների խաբեյութեանները քաղաքականութեանը»:

1930 թվի դեկտեմբերի 21-ին և 22-ին Ռուսում նիստեր ունեցող հանժափորների միջադպային կոնֆերանսը բոլոր կապիտալիստական յերկրների բանվորներին դիմեց մի կոչով, վորում ի միջի այլոց ասվում ե — «Ներկայումս պատերազմ պատրաստողներն ու նրանց գործակալներն ամեն կերպ աշխատում են աշխատավոր խավերի ուշադրութեանը կասեցնել «Պրոլետարիատին» ի հայտ բերած ծրագրերից, նպա-

տակ ունենալով այդ մասսաներին անսպասելիորեն դնել պատերազմի փաստի առաջ: Ներկայումս, ինչպես և միշտ, սոցիալ-ֆաշիստներն ու դեղին Ամստերդամի պրոֆբյուրոկրատները, բուրժուազիայի գործակատարների դերում լինելով, անպահանջ ճիգ են թափում՝ դեղորդանիդացիայի յենթարկել բանվորական մասսաները, նրանց անընդունակ դարձնել պատերազմի դեմ պայքարելու, վորպեսզի այդպիսով ավելի հեշտ կերպով պսակվի իրենց դավաճանութեանը, քան 1914 թվականի պատմական դավաճանութեան ուրերին: Հաշվի պատմական դավաճանութեան լայն մասսաների հատնելով աշխատավորական լայն մասսաների հակապատերազմական տրամադրութեանները, նաև այդ մասսաների՝ դեպի հակախորհրդային պատերազմն ունեցած խոր ատելութեանը, սոցիալ-ֆաշիստները կեղծավորութեամբ կազմակերպում են հակապատերազմական ցույցեր: Սակայն միաժամանակ նրանք ինքնորդային Միութեան դեմ կատաղի հալածանք են տանում, վորպիսին վոչայլ ինչ ե, յեթե վոչ հակախորհրդային պատերազմի նախապատրաստում: Առաջին հերթին մեր — պրոլետարների առաջ ե ծառանում — ինքնորդային Միութեանը պաշտպանելու պայքարը ծավալելու խնդիրը: Մենք, աշխատավորներս, կջախջախենք կապիտալիստների վոճրագործ ծրագրերը, յեթե

կապիտալիստական շահագործման դեմ տարվող
մեր ամենորոյա պայքարը զրոհի վերածինք:

«Հանքափորներ! Վոչ մի կտոր ածուխ
ուղեմական նպատակների համար:

Յերկաթուղայիններ ու ծովագնաց-
ներ! մի փոխադրեք խորհրդային Մի-
ության դեմ ուղղած ապրանքները!

Քիմիկոսներ! կորչի հեղձուցիչ գա-
ղերի արտադրությունը, վորոնք ծա-
ռայելու յեն պրոլետարական պետու-
թյան վոչնչացման գործին:

Բանվորներ և աշխատավոր գյուղացիներ! Բո-
ւորդ դեպի խորհրդային Միության պաշտպանու-
թյունը! Հեղափոխական ֆրոնտ կազմակերպեք
կապիտալիստական ճնշողներին դեմ! Դարձրեք
զենքը իմպերիալիստական պատերազմ պատրաս-
տողների դեմ! Կորչի խորհրդային Միության դեմ
ուղղած ռազմական ինտերվենցիան! Կեցցե խոր-
հրդային Միությունը!»

Այս մի քանի հայտարարությունները, վերց-
յած հազարավոր ու տասնյակ հազարավորների
միջից, ապացուցում են, վոր խՍՀՄ և ամբողջ
աշխարհի աշխատավոր մասսաները պատրաստ են
հակահարված տալ իմպերիալիստական ինտեր-
վենտներին, պաշտպանել ինչ գնով ելվոր լինի,

սոցիալիստական շինարարությունը: Կանգ չառ-
նել վոչ մի զոհարելության առաջ՝ ինչպիսին ել
վոր փաթաթելու լինի նրանց վզին ռազմատենչ
իմպերիալիզմը:

Սրա հետ միասին աշխատավոր մասսաները
իրենց շատ լավ հաշիվ են տալիս, վոր խորհր-
դային Միության պաշտպանունակության ամ-
բացումը, բանվորների և գյուղացիների պատ-
րաստականությունը՝ ակտիվորեն պաշտպանել
սոցիալիստական շինարարությունը, կապված են
մի շարք գործնական ձեռնարկումների հետ, ռազ-
մա-տեխնիկական պատրաստականությունը ուժե-
ղացնելու, Կարմիր բանակի հետ կապն ուժե-
ղացնելու հետ, չխոսելով արդեն գլխավոր և հիմ-
նական խնդրի՝ սոցիալիստական հնգամյակն
իրացնելու տեմպերն ամեն կերպ արագացնելու
մասին:

Իմպերիալիզմը պատերազմի՝ յե պատրաստվում
ռազմական տեխնիկայի արագորեն աճման պայ-
մաններում, իր բանակների զինման գործը որե-
ցոր լայնացնելու պայմաններում:

Ի՞նչ դաս պիտի առնեն այս բոլորից խՍՀՄ
աշխատավոր մասսաները:

Բնական է, վոր առաջին հերթին այդ առաջ-
նակարդ ռազմական տեխնիկան պիտի մտցվի մեր

Կարմիր բանակում ու նավատորմում: Այդ աս-
պարիզում մենք արդեն խոշոր հաջողութիւնների
յենք հասել: Այդ հաջողութիւնները պայմանա-
վորվել ու պայմանավորվում են Պորհրդային
յերկրի բուռն թափով աճող ինդուստրիալիզա-
ցիայով, վորն ավելացնում է Կարմիր բանակի
տեխնիկական բազայի, նրա զինվածութիւն-
ների հետագա կատարելագործման հնարավորու-
թիւնները:

Բայց այդ բավական չէ: Անհրաժեշտ է, վոր-
պեսզի Պորհրդային Միութեան յուրաքանչյուր
աշխատավոր լրիւ պատկերացում ունենա մեր
թշնամիների տեխնիկական ամեն ձևի զինուժների
մասին, վորպեսզի նա վոչ միայն իմանա նրանց
զինուժների աճման, այլ միաժամանակ այս բոլորին
կարողանա հակադրել պատերազմի ժամանակ ան-
հրաժեշտ գէներելին վարժ լինելու ընդունակու-
թիւնը:

Ահա թե ինչու Ոստավիաքիմի բջիջների աշխա-
տանքներից կարևորագույնը է առաջնակարգը
պետք է համարել աշխատավորական լայն խավե-
րում ռազմական գիտութիւնների և տեխնիկայի
տարածումը, ժամանակակից բանակների կազմի և
ամեն ձևի զինուժների հետ ծանոթացնելը Ոստա-
վիաքիմի բջիջների աշխատանքներում պետք է

խտեմատիկ համառ ընույթ կրի, Իմանալ թշնամու
լենքը, կարողանալ նրա հետ վարվել — այդ նշա-
նակում է տեխնիկապետ պատրաստ լինել խոր-
րդային յերկրի պաշտպանութեանը:

Պորհրդային Միութեանը համառ կերպով ու
հետեղականորեն խաղաղութեան քաղաքականու-
թիւն է անցկացնում: Այդ նա ապացուցել է բազ-
մաթիւ որինակներով: Դրա հակառակ, իմպերիա-
լիստները պատերազմի քաղաքականութիւն են
լարում և բոլոր ուժերով արագացնում են՝ ԽՍՀՄ
լրա զինված հարձակում գործելը:

ԽՍՀՄ և ամբողջ աշխարհի աշխատավոր մաս-
սանքը թույլ չեն տա իրանգարել սոցիալիստա-
կան շինարարութեանը, Թող փորձեն իմպերիա-
լիստները բախտ վորոնել խորհրդային յերկրի
եւ ուղղաձ նոր ռազմական ավանտյուրայի մէջ:
Նրանք անխնա կործանիչ հակահարված կստանան
Կարմիր բանակի, բանվոր դասակարգի և աշխա-
տավոր գյուղացիութեան, ամբողջ աշխարհի պրո-
լետարական և գյուղացիական մասսաների կողմից:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	62
Կապիտալիստական աշխարհը նոր պատե- րազմի նախորդակին	3
Կապիտալիզմի ճգնաժամը սրվում է	7
Ճգնաժամի ընդհանուր բնութագրությունը	13
Թվեր ու փաստեր	16
Սմերիկա	20
Ֆրանսիա	21
Սնդուխտ	23
Գերմանիա	24
Լեհաստան	25
Բանվոր դասակարգի դրությունը և կապի- տալիստական յերկրների քաղաքական սլայքարը	26
Իմպերիալիզմը, սոցիալ-դեմոկրատների և յե- կեղեցու ոգնությունը, ԽՍՀՄ դեմ ին- տերվենցիա յե կազմակերպում	31
Հակախորհրդային պատերազմի դործնական պատրաստությունը	44
Աստծու հետ դաշինք կնքած	56
ԽՍՀՄ պաշտպանությունը — ամբողջ աշ- խարհի աշխատավորությունից դործն է	82



ԿԵՆՏՐԻԶԱՏ

ՄԵՐ ԿՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.

ԴՐԱՆԸ՝ Москва, Никольская, 10.

ЦЕНТРИЗДАТ.

<< Ազգային գրադարան



NL0202247

16 477.

Цена 15 коп.

О. П. 9.



И. БУЛАТОВ

**Империализм в союзе с
церковью готовит войну
против СССР.**

(перевод с русского)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 18